№ 3 (123) XII ՏԱՐԻ ՄԱՐՏ 1902

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԽՈՐԽԱՓՈՒՄՆԵՐ

Օսմանեան „ազատամիտների" Համաժողովը մի նոր ապացոյց տուեց այն ճշմարտութեան՝ որ Երիտասարդ Թիւրքիան քաղաքականապէս գտնուում է դեռ իր մանկութեան շրջանում։

Առաջին կօնգրէսն էր իր տեսակի մէջ և, կարելի է ասել, կազմակերպական ամենախոշոր քայլը՝ այդ „կուսակցութեան" տասնեակ տարիների աղմկայոյզ, բայց և դժգոյն գործունէութեան ընթացքում։ Այդ քայլը ևս, ըստ երևոյթին, դատապարտուած է մնալու սոսկ պատմական մի իրողութիւն, առանց շօշափելի հետևանքների։

Երկարատև, տենդային պատրաստութիւններ, հեղինակաւոր կոչ ու յորդորներ, աղմուկ ու իրարանցում՝ օսմանցի բոլոր „ազատամիտների" շրջանում—և գործնական արդիւնքը՝ ոչինչ։ Լեռը մուկ ծնեց։ Արտաքին տպաւորութիւնն անգամ բաւական խղճալի է։ Եւրօպական մամուլի մէջ տեղ-տեղ միայն յիշատակուեց կօնգրէսի մասին, այն ևս կատարեալ անտարբերութեամբ։ Եւ եթէ չլինէին Աբդիւլ Համիդի տխմար մեքենայութիւնները, եթէ չլինէր արգելման ժամանակաւոր հրամանը ֆրանսիական կառավարութեան կողմից, իրողութիւնը թերևս անցնէր բոլորովին աննկատելի։

Եւրօպան երբեմն շատ էր չափազանցնում Երիտասարդ Թիւրքիայի ուժը. այժմ, ըստ երևոյթի, հիասթափուած է։ Նա տեսնում է, որ այդ ուժը աւելի երևակայական է, քան իրական։ Մի քանի տարի շարունակ ականատես էր նա այդ իբր-կուսակցութեան առաջնորդների անարգ շահատակութիւններին, տեսնում էր անարժան կոմպրոմիսներ, նեաստացուցիչ իրաւախոհութիւններ, տեսնում էր սկզբունքի բացակայութիւն, մտաւոր ու բարոյական լիակատար սնանկութիւն...

Մենք ևս տեսնում՝ էինք։ Մենք էլ խորապէս հիասթափուածներից էինք։ Այնուամենայնիւ մենք առաջիններն էինք գուցէ, որ ողջունեցինք կօնգրէսի գաղափարը։ Առաջին անգամը՝ օսմանեան կայսրութեան այլազգեան ու դժգոհ տարրերի ներկայացուցիչները պիտի համախմբուէին՝ իրար ճանաչելու, իրարու հասկանալու և „համերաշխ գործունէութեան ծրագիր մշակելու"։ Առաջին անգամը՝ այդ տարբեր ուժերը մէկ կօնգրէսի մէջ ի մի գումարելով՝ պիտի ցոյց տային Եւրօպային և պաշտօնական Թիւրքիային, որ նրանք իրենց այլազանութեամբ հանդերձ ներկայացնում են բուռն բողոքի մի ներդաշնակ ու ահաւոր հոսանք, ուղղուած միևնոյն բռնապետութեան դէմ։

Եւ միթէ՞ օսմանցի բազմաթիւ պատւիրակների շարքերում՝ չէին գտնուի լուրջ, խելահաս մարդիկ, որոնք պատմութեան և իրականութեան գիտակցութիւնն ունենալով՝ պաղարիւն ու օբիեկտիվ վիճաբանութեամբ իրական համաձայնութեան գային մեզ հետ՝ բոլորիս համար առաջնակարգ ու կենսական մի խնդրի մէջ, որպիսին է արդի ռէժիմի տապալումը և մանաւանդ դրա համար ձեռք առնելիք միջոցները...

Ահա թէ ինչ նկատումներից մղուած՝ մենք փութացինք պատասխանել և ղրկեցինք մեր խմբագրութեան պատւիրակներին։ Մի անգամ ևս կամեցանք—անկեղծօրէն, ուղղամտութեամբ—շեշտել համերաշխութեան այն գաղափարը, որ քարոզել ենք տասնեակ տարուց իվեր և որը վաղ թէ ուշ պիտի յաղթանակէ, չնայած ահռելի խոչընդոտներին։

Եւ եթէ միևնոյն զգացումներով գէթ մասամբ տոգորուած լինէր Երիտասարդ Թիւրքիան, կօնգրէսը չէր ունենայ, անշուշտ, այն ցաւալի վախճանը, որ նա ունեցաւ։ Կօնգրէսին ներկայացող հայ պատգամաւորները զգացին իրենց պաղ ու անհիւրընկալ մի մթնոլորտում։ Առաջին օրից իսկ վրդովեցրեց նրանց արևելեան մօրալին յատուկ՝ օսմանցի ղեկավարների նենգամիտ ընթացքը և նրանց ծայրայեղ անհամբերողութիւնը քրիստոնեաների վերաբերմամբ։ Այդ անհամբերողութեան ամենաընդվզեցուցիչ փաստն էր՝ մակեդօնացիներին չհրաւիրելը և դրա համար բերուած անմիտ պատճառաբանութիւնը՝ թէ „մակեդօնացիք խռովարարներ են"... Իսլամի „ազատամիտ" երկրպագուները այնքան հեռու են գնում, որ մինչև իսկ մակեդօնացիներին իբրև ազգ չեն ճանաչում՝ և չեն ուզում ընդունել նրանց դատի գոյութիւնը։

Շատ աւելի զլջող (՞) ու պատկառոտ է Երիտասարդ Թիւրքիայի վերաբերումը դէպի հայերը։ Կօնգրէսից առաջ և նրա ընթացքում տեղի ունեցած մի շարք փաստերը վկայում՝ են, թէ որքան մեծ կարևորութիւն էին տալիս օսմանցի ազատամիտները հայ պատգամաւորութեանը և հայկական շարժման ընդհանրապէս։ Եւ հէնց այդ է պատճառը, որ նրանք անսովոր ճիգ էին թափում՝ à tout prix ընջելու հայկական հարցի,

հայոց ուրոյն պահանջների գոյութիւնը, որը իբր թէ սպառնում է նրանց փայփայած կայսրութեան ամբողջութեանը։ Ուշագրաւ է և միանգամայն ըմբոստեցուցիչ թէ ինչպէս օսմանեան լիբերալիզմի չիտակ ու արդարամիտ հռչակուած ներկայացուցիչներն անգամ զարտուղի ճանապարհներով, մանուածապատ դարձուածներով ճգնում էին ձուլել „ընդհանուր ռէֆորմների“ կամ Միթհատական մեռելածին „Սահմանադրութեան“ մէջ ուրոյն ժողովրդային մի դատ, որ սրբագործուած է միջազգային դաշնագիրներով և հարիւր հազարաւոր զոհերի արիւնով։

Ահա թէ ինչով էր զբաղուած Երիտասարդ Թիւրքիայի անդրպնիկ համաժողովը։ Մոռացած ներկայի հրատապ խնդիրները, մի կողմը թողած աւերիչ ու յոշոտող բռնակալութեան դէմ ձեռք պռնելիք միջոցները՝ նա մտածում էր միայն ապագայ երպնելի „սահմանադրութեան“ մասին և միջոցներ էր խորհում՝ չէզոքացնելու կամ խափանելու „անջատական“ տարրերը, ընջելու 61-րդ յօդուածն ու Մայիսեան մէմօրանդումը և տարածելու հայերի և ուրիշ քրիստոնեաների վրայ օսմանեան քաղաքացիութիւնն ու անգայնութիւնը։

Այդ զպզրելի մեքենայութիւնները դարձան իվերջոյ անհանդուրժելի և հայ պատգամաւորները ապարդիւն սեպելով իրենց ներկայութիւնը մի այդպիսի հողմաղաց ժողովում, անհնարին գտնելով այժմէական խնդիրների արծարծումը՝ խմբով թողեցին դահլիճը։

Կոնգրէսը վիժած կարելի է համարել։ Հայերից յետոյ անջատուեց նաև մահմէդական ներկայացուցիչների մի ստուար փոքրամասնութիւն, որը իրեն գլուխ ունենալով „պոզիտիվիստ-քաղաքագէտ“ Ահմէդ Բիզային ինքզինքը թշնամի է յայտարարում եւրոպական միջամտութեան։ Մնացածները կազմեցին միայն մի կոմիտէ, որը, ըստ իր սեփական արտայայտութեան, պիտի կարգադրէ „Սահմանադրութեան“ իրագործումը... Թէ ի՞նչ միջոցներով – Ալլահը միայն գիտէ։ Իրողութիւնը այն է, որ Թիւրք ազատամիտները իրենց աւան ական սովորութեան համեմատ՝ այսօր ևս ժխտում են լուրջ կամ բացարձակօրէն — զենուած պայքարի սկզբունքը։ Հեռու բռնութիւնը, հեռու յեղափոխութեան արհաւիրքները, կարգ և առաջադիմութիւն – ահա մեր մոլեգին հնակուսուլթանականների գործունէութեան թէ նպատակը և թէ տակտիկան... Եւ այդ նշանադրեալ քաղաքական երեխաները իրենց տհաս մտքի յաւիտենական խարխափումներով դեռ յանդգնութիւն ունին հաւատացնելու նրար աշխարհին, թէ ամբողջ մարդկային պատմութիւնն է այդպէս ընթացել, թէ ապստամբութիւնները աղետաբեր են եղել միշտ, թէ բռնի ոյժը երբէք ազատարար դեր չէ խաղացել պատմութեան ընթացքում...

Ոչ, ոչ, Երիտասարդ Թիւրքիան չէ առաջադիմում, նա չէ ուսանում։ Իբրև մի ծոլ ցեղի ներկայացուցիչ նա իրագործում է արևմտեան ծոյլ վարդապետութիւնները միայն, որոնք Թիւրքական ազատութեան շարժումը իրախուսելու տեղ՝ տնդամալուծում են նրան։ „Կարգի և խաղաղ առաջադիմութեան“ դոքտրինը ունի ժամանակակից Եւրոպայի մէջ իր լիակատար գոյութեան իրաւունքը, այնինչ՝ տաճկական իրականութեանը պատաստուելով՝ նա հանդիսանում է մի այլանդակ կարիկատուրա։

Թեթևամտութեամբ ու տարօրինակ մի յամառութեամբ մեր „ազատամիտները“ շարունակում են ծանուցանել իրենց „խաղաղ տակտիկան“ նոյնիսկ այսօր, երբ իրենց, Թիւրքերի դէմ կազմակերպել է իվերուստ մի անօրինակ հալածանք, երբ Եղեղեղի բռնաւորը շարունակ աքսորում կամ խեղդոտում է հարիւրաւոր մեծ ու փոքր Թիւրք պաշտօնեաներ։ Երբէք լրտեսութեան սիստէմը այնքան հրեշաւոր ծաւալ չէ ընդունել, ինչպէս այսօր, Թիւրքաց մայրաքաղաքում։ Գաղտնի ծստիկանների Թիւրը — Frankfurter Zeitung-ի թղթակցի վկայութեամբ — այժմ մօտաւորապէս 10,000-ի է հասնում։ Նոյն թղթակցի ասելով, կայսերական պալատում հինգ բիւրօ է հաստատուած՝ „վտանգաւորների“ մասին տեղեկութիւններ հաւաքելու և հրահանգներ արձակելու համար։ Զըկայ այսօր ոչ մի մինիստր, որ աղտած լինի գաղտնի հսկողութիւնից։

Այսպիսի դժոխային պայմանների մէջ սպասելի էր, որ Երիտասարդ Թիւրքիան աւելի համարձակ ու աւելի վճռական ուղղութիւն ընդունէր. թւում է, թէ տէոօրի անողորմ քաղաքականութեան դիմաց՝ նա պիտի կարճ կապէր „կարգի ու առաջադիմութեան“ բանդագուշանքների հետ, պիտի հետևէր հայերի ու մակեդոնացիների օրինակին, պիտի կազմակերպուէր ու կուէր...

Թւում է թէ սուլթանական հալածանքների այդ բազմաթիւ զոհերը, որոնց շարքերում կան, անշուշտ, բարձր առաքինութիւնների տէր մարդիկ, պիտի ստուարացնէին դժգոհների, գիտակից ըմբոստների բանակը և պիտի ուժեղացնէին այդպիսով օսմանեան „ազատամիտ կուսակցութիւնը“։ Այդ բնական երևոյթը տեղի չի ունենում սակայն և Երիտասարդ Թիւրքիան այսօր, ինչպէս առաջ, ներկայացնում է տարբեր ու անորոշ ձգտումների մի քաոսային բայց երբէք „կուսակցութիւն“։

Այս. ցեղական-անտրոպոլոգիական խորունկ պատճառները—մի փատալ ու ողբալի իրողութիւն է այդ—ճակատագրապէս անդրադառնում են Թիւրքաց ամենաազատամիտ սերնդի վրայ ևս։ Երիտասարդ Թիւրքիան իր աշխարհայեցողութեամբ, իր ամբողջ հոգեկան կազմով մի զոհ է իր ցեղի դանդաւոր ու սահուելի անշարժութեան։ Նրա մէջ չկայ ընկերային այն հրաշագործ բնազդը, որը առաջնորդում է մի ազգի ճնշած ու բողոքող ընդհանրութիւնը անդուլ ճիգերման ճանապարհով դէպի հասարակական կենցաղի բարձրագոյն ձևերը։ Ընդունակ՝ ինքնաբերաբար կազմակերպելու զուտ բացասական գործողութիւնների—թալանի և սպանու-

թիւնների համար այդ ցեղը անընդունակ է հանգիստանում նոյնիսկ յանձին իր ամենաֆպարն ու փառաջասէր զաւակներին կամակերպելու յանուն դրական գործի, յանուն կուլտուրական-ազատագրական պայքարի։ Կարծես մի ուրիշ ազգերը կողմ բացակայում է տաճճիկների մէջ պէտք մի քաղաքական ջարժման համար անհրաժեշտ ջանքը, նրա կրքագործող ուժը—գաղափարը։ Անօթի ստամոքսն ու դատարկ գրպանը յեղափոխիչ ուժեր են, անտարակոյս, բայց նրանք բաւական չեն դեռ։

Օտոմանեան լիբերալիզմը փոքրոգութիւն չէ տեսակցիր այլ նոսկ տեսութիւն։ Երիտասարդ-Թիւրքը շարժումը մնում է կորտանված, բաժան-բաժան, երկչոտ ու վարանող, անգոյն ու ամուլ միշտ ռեստորիստ, զառանցող, երբեք իրականութեան վրայ զգաստ աչքով նայող միշտ ֆրազի ներկայացուցիչ երբեք կենդանի գործի միշտ ձրի յոխորտացող ֆ և ֆրազ խածնող նա յամառում է անհաստատ բոլորի շրջանում,—անհաստատներն էլ մի մի կենտրոնախոյս ու անտագոնիստ ուժեր են, որոնցից փրոբանչիւրը փրկիչ է ուզում լինել։ Մի մի զորապետներ, առանց զինուորների։

Սկեպտիկ էինք Երիտասարդ Թիւրքիայի մտադրութեան և քաղաքացիական յառաջինդութիւնների վերաբերմամբ. Պարիզի համաժողովը եկաւ, դժբախտաբար, աւելի ևս ամրապնդելու մեր ծկեպտութիւնը։

ԵՒՐՕՊԱՆ ԵՒՐՕՊԱՅԻ ԴԷՄ

Երկու Եւրոպա կայ։

Եւրոպա՞ Վիլհելմի ու Նիկոլայի, Բիսմարկի ու Կրիմպիի, Սոլզբերիի ու Հանոմայի, ուրիշ խօսքով դիպլոմատիական Եւրոպա, որ մի Ամբիծ ունի—ուժը, մի աւետարան—շահը, մի սրբութիւն—գահը։

Եւ դիան կայ մի այլ Եւրոպա վիզեան Եւրոպան, նա որ ունի ցնորք, իդէալ, երազներ, որ ունի նոյնպէս սուրբ—արդարութիւնը, մի այլ Աւետարան—հաւասարութիւնը, մի այլ սրբութիւն—ազատութիւն։

Մէկը ուժեղ է տակաւին, միւսը դեռ թոյլ։ Առաջինը՝ ծնունդ է անցեալի, յենուած դարերի վրայ, ձեռքին բռնած գահը, նկեղեցին, կապիտալը։ Երկրորդը՝ ժառանգ ապագայի, տարուած արշալոյսի հրապոյրներով, ձեռքին բռնած տապանդրիչ ու նշտար։ Մէկը կանգնած դարերի ամրոցի, դաժան, երկիւղը ներշնչող, կնճիռներին ճակատին. միւսը թէև թոյլ բայց կենսունակ, փնչպէս նորածին մանկիկ, ժպտադէմ, յոյսը սրտում ճնկնած փայլատակուն...

Առաջինը մեր թշնամին է, ֆայեր,
Երկրորդը մեր բարեկամը։

Ամբողջ 50 տարի այդ թշնամուն դիմեցինք։ Նապոլէոնին դիմեց Զէյթունը՝ 1862-ին. Բիսմարկեան Բերլինին հայոց պատրիարքը՝ 1878-ին, յարեանկեան օրերին, երբ օգնաբար զօրքերի վրայ հայկական նահանգները՝ հայութիւնը դէպի ապատամարութիւն էր կոչում։ Նրան դիմեցաք պատրիարքը, հայ ազատագրութիւնը, հայոց ժամուրը նոյնիսկ երբեմն հայ կուսակցը։

Եւ խաբեց։

Այդ հակարիչ ուժի հմտութեան ծիրանով պատած կախարդը, երբեմն այնքան մեծահոգի, իդէալիստ, գաղափարական՝ երբ շահերի պատահանդիպումը դիպուածը այդպէս է թելադրում, շարունակ և ամենանգամ խաբեց, այդ հայերին կամ խաստոմներով—անիծած իրատուներ—նա յեղակոծեց ճգնաժամի ճակատագրական լուծումը, և կամ, որ վատթարագոյնն է, կաբինետի մէջ փակեց այն ինդիրը, որ ստեղծուած էր հայ ազգի վրայ ապրելու, մի ինդիր, որ չէր կարող և երբեք էլ չէ կարող ապրել դռնփակ կաբինետներում, դիպլոմատի թղթածածկ սեղանի վրայ, այլ միայն արևի տակ, ժողովրդի ծոցում, նրան հողի վրայ, ոչ թանաքի տեղ՝ արիւնով է անկած նրան պատերազմ, ոչ սեղանաշուրի տեղ դրուած է կրակ, յոյզ տենչ խղէալ...

Եւ մենք փորձեցինք նկրկ թափանցելայդ քուրմ-կան աշխարհը՝ անսիրտ, ապիսիրդ պատմութիւնից ջնջուող և գաղափարից զուրկ կաբինետները, իրև քաղաքական մարդկան, իրև աղերսող, իրև ստրուկ ժողովրդի անդոր թարգման։ Եւ դիպլոմատիան միշտ իրեն հաւատարիմ, օրոր կաքդաց մեր գլխին, խաբեց ձեռնունայն ճանապարհ դրեց ինչ յաճախ ծաղրի առնելով մեր պրտասուքը, քրքիջ արձակելով այն երկրի երեսին, որ տիրում էր արիւն, վիշտ, արցունք, ստրկութիւն։

Բայց ահա նոր Եւրոպան, վաղուան, իդէալների Եւրոպան, որ բարձրանում է հորիզոնի եզերքին, ինչպէս մշուշապատ լեռան գագաթն՝ ջերմացնող ճառագայթների դիմաց. կանգնած մի պատանդանի վրայ, որ չէ շինուած թղթից և թագերներից ոչ ջաղխուած արտասուքով, ձեռնակերտ աղերսող Հայաստանի, այլ մի այլ պատանդանի վրայ, որ կարուցուած է դիակներից, շաղախուած զոհերի և հերոսների արիւնով, կերտուած բազմաբի սպառնալիքներ, պայքարի զանգուածով, ձեռակերտ նոր, կուսող Հայաստան։

Արքազան պատանդան։

Օտարի կամքից դէ կախուած նրա բարձրութիւնը, քարով և կիրով չէ շինուած նա, նրա մէջ քարը՝ հերոսի դիակն է, կիրը՝ յեղափոխականի ջրիւնը։

Եւ բարձրացած այդ սրբազան-նոյնիսկ թերքահաւատներին սիրտ տուող բուրգի վրայ՝ իդէալների Եւրոպան ձայն է գցել ամբողջ աշխարհը, ձայն՝ բողոքի, ձայն՝ ոգևորութեան, բողոք՝ ընդդէմ դիպլոմատիական նենգութիւնների, ոգևորութիւն՝ ընդդէմ խեղդողական ստրկութեան։

Երէկ այդ բողոքը չկար։

Այսօր նրանն է հրապարակը։

Եւ այդ հրապարակի վրայ այսօր հայոց հարցը ունի այնպիսի մեծանուն բարեկամներ, ինչպէս՝ Պասսի, Պրեսանսէ, Ժորէս, Անատօլ Ֆրանս, Կլէմանսօ, Վանդալ, Ա. Լըրուա-Բօլիէօ, Քիյար, Վիկտոր Բէրար, Դ'Էստուրնէլ, Գօհիէ, Ջէմբա, Ռուանէ և Դը Կօնստանսօն ելն.—Ֆրանսիայում։ Բրայս, Ստէվէնսօն, Մակ Կօլ, Դիլօն, Ռամսէի, Բիտ—Անգլիայում։ Վանդէրվէլդ, Ռէկլիւ, Դընիս, Լօրան, Եանսօն, Պ. Էրրէրա և Պիքար Բէլգիայում։ Վիրխօվ, Լամպրէխտ, Բէրնշտէյն, Բէբէլ, Կաուտսկի, Լէպսիուս, Հարդէն, Լէհման, Րօրբախ ելն. — Գերմանիայում— Վան Կօլ—Հօլանդիայում։ Բայեր—Դանիայում։ Լօմբրօզօ, Ֆէրրի, Չիպրիանի, Ֆէրրէրօ, Գարիբալդի—Իտալիայում և ուրիշ շատերը Շվէյցարիայում, ինչպէս և այլ երկրներում։

Եւ այդ բոլոր բարեկամները, պատկանող ոմանք պարլամենտական շրջանին, ոմանք գրողների դասակարգին, միւսները՝ լոկ իբրև պրօպագանդի ներկայացուցիչներ, ոմանք իբրև պետական անձինք, կամ գիտութեան սպասաւորներ, միակամ և միաբերան, թէև յաճախ անծանօթ մէկը միւսին, հուժկու ալիքներով տանում և տարածում են այն դատը, որ արդարութեան դատն է, որ ազատութեան երջանիկ օրերին հայկական լեռնավայրում պիտի մարմնացնի քաղաքակրթութեան բարձր գաղափարները, հեռու քաղաքական բացառիկ, նեղ, անցողական ծրագիրներից. . .

Անդարձ անցան թիւրիմացութեան տխուր օրերը, երբ ստրուկ Հայաստանը իր ազատութիւնը սպասում էր օտարից, և այն քաղաքական աղերսագրերի միջոցով։ Թարս մտածողութեան շրջանն էր դա։ Մենք նրան պատմութեան յանձնեցինք։ Նա գոյութիւն ունի արխիւների մէջ, բայց ոչ կռւող և տանջւող երկրում։

Եւ յետո՞յ։

Եւ յետոյ մի այլ պարզաբանութիւն, որ տւեց մեզ տասն տարւայ կռւի տրամաբանութիւնը, քաղաքական դրութեան տխուր, անհաճոյ, բայց իրական կազմը —այն, որ առանց Եւրօպայի միջամտութեան դժւար, նոյնիսկ անկարելի է ստեղծել ինքնավար Հայաստան։ Մենք դեռ շատ հեռու ենք այն երջանիկ, հրապոյրներով լի, և այնքա՜ն գրաւիչ օրերից, երբ սօցիալական մեծ յեղափոխութիւնը կը ջնջէ քաղաքական Եւրօպան, հիմնելով նրա աւերակների վրայ Նոր Եւրօպան, իբրև մի դաշնակցութիւն, ազատ սպանիչ և անվերջ թշնամութեան ճիրաններից։ Սպասել այդ օրերին, կը նշանակէ սպանել արիւնաքամ Հայաստանը։ Պատմութիւնը և կեանքը մեր վզին դրել են ոչ թէ սպասելու խաչը, այլ կռւի խաչը։

Եւ այդ կռիւը չի սպասում։ Նա թելադրում է տարաբախտաբար հաշւի առնել իրերի վիճակը, որ մի օր հանդէս է գալիս իբրև ռուսական քաղաքականութիւն Երասխի ափերին, միւս օրը՝ իբրև գերմանական կօլօնիաներ՝ Փոքր-Ասիայի սահմանների վրայ, մի ուրիշ անգամ իբրև անգլօ-ռուսական մրցում, ու մի այլ տեղ իբրև Եւրօպայում տիրող թագաւորական տների գոյութեան խնդիր, որ հրապարակ է նետել գաղտնի դաշնագրերի մի անվերջ շղթայ, իբրև անհաշտ ոսոխ ազատագրական ամէն մի շարժման, լինի դա Հայաստանում թէ Լեհաստանում, Բալկանի վրայ, Ֆինլանդիայում. . .

—

Սակայն հայը, անկազմ թէև ոգևոր, ուժասպառ թէև տոկուն, անկարող է միաժամանակ կռիւ վարել թէ ուղղակի թշնամու դէմ, որ Թիւրքիան է, և թէ անուղղակի հակառակորդի դէմ, որ քաղաքական Եւրօպա անունն է կրում։Ստամբուլեան բռնապետութեան դէմ— հայը պիտի կանգնի ինչպէս թումբ փրփրած ալիքների դէմ, կուրծք տալով թշնամու գնդակին, բանտին, սուրին և դաւերին։ Իսկ Եւրօպայի դէմ, բռնապետութեան դաշոյնը խարտող Եւրօպայի դէմ՝ մենք պիտի կանգնեցնենք մի այլ Եւրօպա, վաղւան Եւրօպան, նա, որ ինչպէս պահապան-առիւծ, իրօք տարւած է արդարութեան գործով։

Փաստերը քիչ չեն։ Եւ նշանները՝ շատ սփոփիչ։

Այդ նոր հոսանքը, հայասէր բարեկամների միջազգային դաշնակցութիւնը, անկաշառ է, վստահելի, ապագայի տէր։ Նա հերոս է իր ձգտումներով, իր սիստեմով։ Աղերսանք չի պահանջում նա մեզանից, և ոչ էլ իր շէմքերը մաշելու փեշակ։ Հակառակը։ Նա ատում է աղերսանքը, սպասելը։ Նրա իդէալը՝ բողոքն է ու կռիւը և այդ իդէալը միշտ վառ պահելու համար, մենք այլ նիւթ, այլ միջոց չունինք, բայց եթէ բողոքը և կռիւը. . .

Եւ նրանք, այդ իդէալիստ, անկաշառ բարեկամները, հայասէրների այդ միջազգային լիգը կը դառնայ մեր կռւի, հայկական յեղափոխական փոթորիկների դիւցազներգուն, սիրտ տւողը, նրա մշտական փաստաբանը Եւրօպայի առաջ, արթուն հսկողը՝ որպէս զի փաստերը, թէ արեան և յաղթութեան փաստերը չթաղւեն Հանօտօ-Լօբանօվեան կաբինէտներում, ինչպէս այդ եղաւ փորձութեան տարիների շրջանում. .

Եւրօպան՝ Եւրօպայի դէմ։

Եւ դա պիտի լինի հայկական միակ „քաղաքականութիւնը“, արտասահմանեան պրօպագանդի հիմնական նպատակակէտը, որ իր գոյութեան, իր յոյսերի և իր աջողութեան համար մի աղբիւր միայն ունի — կռիւ երկրի մէջ, յեղափոխական ցնցումն ժողովրդի ծոցում. .

Կռւող հայը՝ բռնաւոր Թիւրքիայի դէմ։

Ազատասէր Եւրօպան՝ քաղաքական Եւրօպայի դէմ։

Այդ են յորդորում են մեզ մեր եւրօպացի բարեկամները։ Այդպէս է թելադրում մեզ կռւի լօգիկան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌԱՅԽՍՏԱԳԻ ՄԷՋ

Ուշ բան երբէք։ Եթէ չենք սխալուում, առաջին անգամն է, որ Հայկական Հարցը յուզուում է այդ պաշտօնական հաստատութեան մէջ, ուր այսօր ևս դեռ կարծէք սաւառնում է Բիսմարկի ոգին։ Գերմանիայի պատգամաւորական ժողովը իր հարիւրաւոր դէմօկրատ ու սոցիալ-դէմօկրատներով տարիների ընթացքում լռելեայն կամ բացարձակօրէն ծափահարում է Վիլհէլմ II-ի գերազանցապէս ռէակցիոն քաղաքականութիւնը տաճկական Արևելքում։ Ռայխստագը հաւատարիմ մնաց իր այդ տրամադրութեանը նոյնիսկ ամենաողբերգական ու շառաչալից թուականներում, երբ „բարեկամ Համիդը“ խեղդում էր արեան մէջ մի ամբողջ քրիստոնեայ ժողովուրդ։ Մի ահռելի քարասրտութեամբ, որ յատուկ է թերևս միայն գերմանական ցեղին՝ այդ գերագոյն ազգային հաստատութիւնը խուլ ու մունջ էր մնում հայկական հոգևարքի դիմաց և անվրդով, առանց կարմրելու հանդուրժում էր պրուսական ոստիկանութեան շահատակութիւններին, որոնց նպատակն էր խեղդել Գերմանիայում ամէն մի ազգու պրոպագանդ՝ յօգուտ հայերի, իվնաս բարեկամ կառավարութեան։

Փետր. 3-ին վերջապէս մի մարդասէր ձայն փորձեց խղդել այդ քարասիրտ մթնոլորտի վրայ։ Սոցիալիստ Գրադնաուէրն էր դա, որը բաւական հանգամանօրէն ծանրացաւ Հայաստանի արդի վիճակի վրայ։ Ահա նրա ճառի համառօտութիւնը, որ քաղում ենք Vorwäerts լրագրից։

„Ինձ մնում է այժմ խօսել մի ուրիշ խնդրի մասին, որը հազիւ թէ երբևիցէ մանրամասն քննութեան առարկայ է եղած Ռայխստագի մէջ, բայց որի պարզաբանումը այս հիմնարկութեան բարոյական պարտքն է թւում։ Խօսքս այն լուրերի մասին է, որ վերջին ժամանակներս կրկին հասան Գերմանիա և որոնք վերաբերում են Տաճկաստանի հայերի վիճակին։ Երբ 1894-ին Եւրոպայի ուշադրութիւնը ուղղուեց Հայաստանի արիւնոտ անցքերի վրայ, ամբողջ աշխարհը ցասման մէջ էր և Անգլիան, ինչպէս նաև Ռուսաստանը ուղղեցին Թիւրք կառավարութեան մի յիշատակագիր, որով պահանջում էին դադարեցնել այնտեղ առաջացող զարհուրելի ջարդերն ու գազանութիւնները։ Թիւրքաց կառավարութիւնը ընդունեց այդ յիշատակագիրը, սակայն, դժբախտաբար, նրա խոստումների իրագործման մասին այժմ խօսք անգամ չի կարող լինել։ Տարիներից իվեր և վերջին ժամանակներս յարաճուն չափով դարձեալ կատարւում են սարսափելի աւերմունքներ ու կոտորածներ հայերի մէջ։ Դրա պատճառը թիւրքերի և հայերի ցեղական ու կրօնական տարբերութիւնների մէջ չէ միայն, այլ նաև տնտեսական ու քաղաքակրթական ասպարիզում։ Հայ ազգաբնակութիւնը հակումն ունի դէպի եւրոպական հաստատութիւնները և ներկայանում է, իբրև արթուն, կենդանի առաջադիմող մի ժողովուրդ, որը ձգտում է ազատուել Տաճկաստանի չափազանց ապականած պայմաններից։

„Հայաստանի մէջ այժմ տիրում է ընդհանուր իրաւազրկութեան մի վիճակ. շարունակաբար տեղի են ունենում անմեղների բանտարկութիւններ։ Հրդեհւում են ամբողջ գիւղեր, չեն խնայում կանանց ու երեխաներին։ Այս տեղեկութիւնները անհիմն չեն, նրանք վաւերացում գտան ֆրանսիական մինիստր Դելկասէի ճառում անցեալ նոյեմբերի 5-ին։

„Տաճկաստանի մէջ չկայ ոչ մի հաստատութիւն, որ ընդունակ լինէր բարեփոխումներ անել։ Վիճակի առաջնորդներ և ուրիշ հոգևորականներ իրաւունք չունին կառավարութեանը գանգատներ ներկայացնելու։ Իւրաքանչիւր մի գանգատաւոր հայերի կողմից պատժւում է, որպէս պետութեան դաւաճան։ Կ. Պոլսի հայ պատրիարքարանը ևս բոլորովին անզօր է հանդիսանում։

„Արդ, ես հարցնում եմ պետական պարոն կանցլերին՝ տեղեակ է նա այդ իրողութիւններին և արդեօք գերմանական կառավարութիւնը, ինչպէս նաև Բերլինի դաշնագիրը ստորագրող միւս կառավարութիւնները մտադիր չե՞ն որոշ դիրք բռնել այդ խնդրի մէջ։ Մասնաւորապէս Գերմանիայի վրայ է ընկնում այդ պարտականութիւնը, որովհետև գերմանական կայսրը քիչ առաջ խօսում էր այն առանձին բարեկամական յարաբերութիւնների մասին, որ մենք ունենք Թիւրքիայի հետ։ Նա շեշտում էր, որ գերմանացիք և տաճիկները, թէև տարբեր ծագում ու կրօն ունեցող՝ այնուամենայնիւ կարող են լինել շատ լաւ բարեկամներ։ Եթէ այդպէս են մեր յարաբերութիւնները Թիւրքիայի հետ, ապա ուրեմն մեր մասնաւոր պարտականութիւնն է՝ հսկել, որ գործադրւին հայերին պաշտպանութիւն խոստացող որոշումները“։

Բիւլով ցինիկաբար հեգնեց սոցիալիստ պատգամաւորի առաջարկը, կտրուկ յայտնելով, որ Գերմանիան չի կարող մղել համաշխարհային քաղաքականութիւն։

Աւելին սպասելի չէր մի կառավարութիւնից, որը ամենավայրագ Realpolitik-ի մարմնացումն է այսօր և որը միշտ ցինիզմով ու հեգնութեամբ է դիմաւորել ճնշած ազգերի աղիողորմ գանգատներին։

Բիսմարկի հռչակաւոր ֆրազը Արևելեան խնդրի վերաբերմամբ՝ պահպանում է դեռ իր ամբողջ ուժը։

ՏՕՔԴՕՐ ԻՍԼԱՔ ՍԻՒՔԻԹԻ ՊԷՅԻ ՄԱՀԸ

Ընդհանուր ճշմարտութիւն մը եղած է այն կարծիքը թէ, Թիւրքերուն մէջ յեղափոխական և ներկայ ըէժիմին դէմ ըմբոստ տարրերը առհասարակ ոչ-Թիւրք միւսիլմաններն են եղած՝ ալբանացի, քիւրդ, տաղիստանցի, չէրքէզ, արաբ ևն։ Թիւրք-Թաթար ցեղին մէջ մայրերը դեռ աշխարհք չեն բերած օրինակելի և ձեռներէց անհատներ, որ քաջութիւնը ունենային պատերազմի դաշտը նետուելու և իտէալական հաւատքէն մղած, կեանքի գիւցազներգական արհամարանքը ունենային բռնաւորին դէմ։ Եթէ անոր մէջ գժգոհութեան ակօսներ կամ վաղանցիկ խլրտումներ կը նշմարուին, անպատճառ հոն ուրիշ ցեղի մը արիւնը կրող ձեռք մը կայ։

Տքդ. Սիւքիւթի պէյ, որուն մահը Սան-Ռէմոյի մէջ, այնքան ցաւ պատճառեց Թիւրքիոյ ազատասէր կուսակցութեան և զինքը ճանչցողներուն, տիգրանակերտցի քիւրդ մըն էր, որ Պոլսոյ բժշկական վարժարանէն Հռոդոս աքսորուելով, իբր յեղափոխական խռովարար, բանտէն փախած եկած էր Եւրոպա 1896-ին և երիտասարդ Թիւրքերու կուսակցութեան էն ուժով թերևս էն կարևոր սիւներէն մէկն եղած էր։

Հակառակ անքաջալեր պայմաններուն և իր վիճակախտաւոր դրութեան, ինքնամոռացութիւնով ու յարատեւութիւնով վարեց „Օսմանլը“ թերթին խմբագրութիւնը։ Իր մահը, եթէ չենք սխալիր, „Օսմանլը“-ի մահը եղաւ միանգամայն։

Մեր ընթերցողները կը յիշեն երկու տարի առաջ „Դրօշնակի“ մէջ հրատարակուած քիւրդերէն ուղղուած կոչերը, որուն հեղինակը „Քիւրդ բարեկամ մը“ կամ „Քիւրդ մը“ ստորագրութիւններով, տգդ. Սիւքրիւթին ինքն էր, ով հրաւէր կը կարդար իր ազգակիցներուն, եւ կենալ սուլթան Համիդի չարագործ ծրագիրներուն դէմ ելլալու ճիշդ է, երիտասարդ թիւրք էր ան, բայց Թիւրքիան վերակենդանացնելու պատրանքին մէջ, ամբողջ ցեղի մը մեռելութեան առջև, դժնդակ իրականութեան մոմտուքը ունէր. երբեմն մէջ կ'արթննար իր ցեղին ոգին և կուզէր ծնուիլ քրդերու մէջ և հայերուն հետ հաւասարաշունչ վերջ տալ անազնիւ ու ոճրագործ բէժիմին, որ կ'ապականէր իր ցեղը և կ'աւերէր երկիրը։

Իր հասարակական ըմբռնումները չմնացած էին եւրոպական աշխարհայեցողութիւնով. ազատամիտ, կրօնի թշնամի—որ Թիւրքիոյ կոիծանման պատճառն կը սեպէր—գործնական յեղափոխութեան կուսակից, բայց համոզուած միանգամայն որ թիւրքերու ձեռքով անհնար է ատ։

Տգդ. Սիւքրիւթի, իր խղճին հետ հաշտ, Թիւրքիան ողջնչելու ապերախտ նպատակին մէջ գործեց, առանց մեծ յոյսեր տածելու անոր վերածնութեան մասին, առանց հաւատալու և երբ տարաբախտ մեռաւ Թիւրքիոյ հոգիին դեռ շատ հեռու էր արշալոյսներ ունենալէ։

Հէ որ Թիւրքիան յուսահատութիւններու երկիրն է։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԷՆ

12/25 յունուար 1902

Անցնող տարուան վերայ յետադարձ ակնարկ մը՝ այնքան ցաւագին, որքան ձանձրալի պիտի ելլար, քանի որ նոյն հարստահարութեանց, նոյն հասարակական գանգատներու և վշտին, ու կառավարական նոյն անտարբերութեան մանրամասնութիւններն էին, որ պիտի նշանակէինք։ Եւ արդէն Թիւրքիոյ ու Հայաստանի մեռելական կացութեան մէջ այլազանութիւնը կամ՝ փոփոխութիւնը արիւնի անցքեր, ահաւոր տառաններ ոչ Ժողովուրդներուն աղաղակին երբեմն ուժգին, երբեմն հոգեվարք արձագանքները կը կազմեն։ Այսօրը այնքան նման է ասկէ հինգ վեց տարի առաջուան երեկին ուստի հաւատարար կրնանք ըսել թէ պէտք բոլոր վաղերն նոյն այնքան կսկծերէն նոյնը պիտի ելլան իրենց բոլոր նախորդներուն։ Եւ ի՞նչ դառնութիւն, հոգիի ի՞նչ դժոխային գիտակցութիւն՝ երբ ժողովուրդ մը, ինչպէս հայը, նոր տարին կը սկսի յուսահատութեան, անմխիթար լքումի և ամենէն խելագար բռնապետութեան մը քմահաճոյքին թողուած ճամակերպութեամբ։ Հրաշք մը չէ՞ որ վաղը, գարնան դուռը բացուած՝ պէս ինչպէս կրկրագործն իր հողուն գլուխը գտնար ու այս ցուցիչին բուքին՝ խանութպանը իր ափ մը խանութին մէջ կծկուած՝ արիութեամբ մղէ աշխատութեան պայքարը։ Եթէ ապրելու բնազդական ազնիւ բաղձանք մը, աշխատութեան յամառ ու նեւնական կորով մը օժտած է ելլար մեզ, հաւատացէք որ վայրկեան մ'իսկ անհնար էր ապրիլ այս արիւնաշաղախ գետիններուն, այս ընդարձակ ու համատարած գերեզմանոցին մէջ։ Հաղորդակցութեան բոլոր միջոցները կտրուած, այնպէս որ ամենամատաղ հեշտութեամբ իսկ էն պատուաւոր վաճառականը արգիլուած է մօտաւոր գաւառ մը ճամբորդել, արդիւնաբերութեան բոլոր աղբիւրները ցամքած, միայն Ժողովուրդը իր մահին ու ոսկորին հետ գետապարտուած է մեքենական կեանք մը քաշկրտել ու ապրիլ չի պահանջել։

Եւ սակայն այդ միսն ու ոսկորը իրե՞ն թողուած ելլային սիստէմատիքաբար պատրաստուած այս աղքատութեան, թշուառութեան մէջ, ուր նոյն բան մը չի կայ զոհաբերութեան, այդ միսն է որ կը պահանջեն։ Վերջին պարտքի օրերէն մէկ երկու շաբաթ առաջ խեղճ աղքատներու անկողինները, ուտելիքը, ափ մը պաշարը ծախու հանեց կառավարութիւնը կամ գրաւեց. ամբողջ ընտանիքներ մնացին ձիւնին ու սառոյցին վրայ այս սոսկալի ձմեռուան մէջ, ուր դուրսը ագռաւին թևը թռած ատեն կը սառի։ Հարկահաւաքութիւնը երբէք յայտնի ծայրայեղ հարբստահարութեան միջոց մը դարձած չէր. տասնեակ տարիներով բացակայ եղողներուն, անդարձ պանդխտացողներուն՝ ինչոց ողջ ելլալն իսկ տարակուսական է—բարդուած տուրքերը կը գանձուին, պիտէք ուրկէ,—ամենահեռաւոր ազգականներէ, հեռուէ հեռու ծանօթներէ կամ—հաւատացէք թէ սխալ չի կայ—անոնցմէ, որոնք պիտաջին հարցուփորձի մը այդ բացականերուն լոկ անունը գիտցած կ'ելլան։ Եւ այս բոլոր վագերային սկզբունքին գործադրիչն են քաղաքիս Մալ-միւտիւրին և յետին թահսիլտար Ահմէտ էֆէնտի անունով մէկը, այս վերջին թրքացած հայ սերունդէ մը կ'ինչէ. ասով յայտնի արդէն իր արիւնին որքան ապականուած ելլալը, զրով իր նախահայրերը դուրս եկ եկած տառապող, բայց ազնիւ հայերու շարքէն և անցած ապականակիր ընկերութեան մը ծոցը։ Քանի՞ քանի՞ անգամ բողոքեցաւ այս 100 ղրշ. ամսականով ծառայող բռնաւոր ու վնասակար պաշտօնեային դէմ, բայց Դայմագամը իր գինովութեան ժամերէն ազատ միտք ունեցած չ'եղաւ, որպէսզի իր պաշտօնին արդարութիւնը գործադրէր։ Ասկէ տասն օրշ ետաջ Ս. Ստեփանոս թաղի ներկայացուցիչները (աղաները) վեց օր բանտարկեցան, գիտէք ինչու, որովհետև նոյն թաղէն չէին կրցած գանձել չեմ դիպեր քանի՞ հազար դահեկան զինուորական տուրք։ Բայց աղան ինչո՞վ յանցաւոր է, ի՞նչ բանով պարտականէ թաղին տուրքը իր քսակէն վճարելու։ Օհ, և այս բանտարկութիւնը լոկ այդ 100 ղուրուշնոց թահսիլտարին քմահաճոյքին պատճառով։ Նախատինք մըն է ասիկայ, անիրաւութիւն մը, որուն չարդչի կրնար դիմանալ, բայց որո՞ւ պէտք է գանգատիլ որո՞ւ դիմել։ Կ'իմանանք թէ այդ բանտարկեալ հայերը—որոնք պատուաւոր և կարող մարդիկ են—դատ բացած են նոյն թահսիլտարին դէմ, Դատին վերջաւորութիւնը հիմակուընէ իսկ գուշակելը դժուար չէ։ Հայերը պիտի վճռեն և պիտի ստիպեն ասկէ ետք խորին մեծարանքով վերաբերիլ այդ թահսիլտարին հետ ու յարգել անոր բոլոր քմահաճոյքները։

Ի՞նչպէս հայը ինչո՞վ իր պարտքը՝ իր տուրքը վճարէ, երբ քաղաքական, տնտեսական անտանելի կաշկանդումներէ, հալածանքներէ ետք կը ծանրանայ տակաւին պաշտօնեային, թիւրք խուժանին մասնակի զ. առանձին

բռնակալութիւնը, կամայականութիւնը և ընկերութեան յետին չարագործներուն բոլոր սանձարձակ սխրագործութիւնները։ Գողերու յատուկ ընկերութիւններ կազմակերպուած են, վստահաբար օրինաւոր պաշտօնեաներու պաշտպանութեանը տակ, որոնք համարձակութեամբ կը գողնան, կը թալանեն, թէ գիւղերը և թէ քաղաքը, հայ տուներ։ Գրեթէ ամէն գիշեր տուն մը կը բացուի և բնակիչներու քնացած միջոցին տանը բոլոր իրեղէնները կը կողոպտուին, արթուն վիճակը աւելի վնասակար է, որովհետև բողոքի կամ իրարանցման մը պատահականութեան առջև անզէն բնակիչը կամ կըսպաննուի և կամ մահու չափ կը վիրաւորուի։ Անկէ մէկ երկու ամիս առաջ Խուլլու գիւղի խոճաբաշին սոսկալի կերպով վիրաւորուած գտնուեցաւ գիշեր մը, յայտնի աւազակ Մուլլագեղցի պէկի մը ձեռքով, որովհետև խոջաբաշին ու գիւղի կարգ մը ազդեցիկ հայեր այս անցնող տարուան ամառը արգելք եղած էին նոյն պէկին Խուլլուի աշարը առնելու. քանի որ պէկը աւազակի ընչաքաղցութեամբ վերջին աստիճանի հարստահարած էր քանի մը տարի այդ գիւղն ու գիւղացիները։ Խոճաբաշին երբ կառավարութեան դիմեց վիրաւոր ու հիւանդ, վռնտուեցաւ լրբօրէն։

Ու այս դրութիւնը այնքան տարածուն, այնքան մահացու հանգամանք մ'առած է, որ ազատ խիղճն ու ազնիւ գիտակցութիւնը անկարելի է որ չ'ընդվզին։ Պայրամէն երկու շաբաթ առաջ 4-5 թիւրք զինուորական սպաներ ցորեկ ատեն շուկայի մէջ յարձակեցան տէֆթէրտարին վրայ և զայն չարաչար կերպով ծեծեցին, իրենց ապառիկ ամսականները պահանջելով։ Մենք չենք մեղադրեր այդ սպաները, երբ տարուան մէջ մէկ ամսական մ'իսկ առնելու անկարելիութիւնը կը տեսնեն։ Հարկաւ տէֆթէրտարը յանցաւոր չէ, բայց սպաներն ալ տէֆթէրտարը գանակոծելով՝ վերին, բարձրագոյն իշխանութիւնն է, որ կը խայտառակեն և անոր դէմ է որ կ'ընեն իրենց ցոյցը։

Այս շաբթուան կարևոր և միանգամայն քստմնելի լուրը Տիգրանակերտէն է որ կուգայ։ Կը լսենք թէ ցորեկ ատեն կարգ մը սրիկայ թիւրքեր բռնութեամբ կը մտնեն հայ պատուաւորի մը տունը և հոն հաւաքուած հինգ վեց հատ հայ պատուաւոր տիկիններ կը բռնաբարեն ու կը լլկեն։ Ասոր վրայ հայերը տագնապալի իրարանցում մը կ'ունենան իրենց բոլոր խանութները գոցելով զէնքի կը դիմեն։ Շուկաները երեք օր փակ կը մնան. կուսակալ — որ ահաւոր տեսակէն կաշառակեր, հարստահարիչ չարագործ մըն է — իզուր կաշխատի հայերը համոզել ու գրգռուած զգացմունքները հանդարտեցնել, քաղաքը զինուորական պաշարման տակ կ'առնուի և ալ չենք գիտեր ինչպէս կարելի կ'ըլլայ մտքերը խաղաղեցնել։ Տակաւին ստոյգ մանրամասնութիւններ կը պակսին մեզի եղելութիւնը իր վաւերական ու ամբողջական հանգամանքով ներկայացնելու։ Դուք ասկէ իսկ կրնաք չափել թէ յարաբերութիւնները որքան սեղմ են Հայաստանի մէջ, քանի որ Խարբերդ Տիգրանակերտէն երեք օրուան հեռաւորութեամբ մը բաժանուած է և հոն տեղի ունեցող դէպք մ'իմանալու համար ստիպուած ենք տասնեւհինգ օրով սպասել։ Մենք այնքան վարժուած ենք այս կարգի վատ չարագործներու ոճիրներու, որոնք մեզ վայրկեան մը կամ շատ շատ օր մը կը հետաքրքրեն. մտքի լարուած շահագրգռութիւնը իրաւ է թէ կանցնի, սակայն անոր կը յաջորդէ ջախջախիչ տրտմութիւն մը, ակօսուած յուսահատութիւն մը և խուլ զայրոյթի մը քնացած փոթորիկը։

Հայը լոկ յոյսով մը կապրի և այդ յոյսը, ամէն պարագայի տակ կրկնած ենք, քրիստոնեայ Եւրոպային վրայ դրուած վստահութիւնն է։ Պոլսոյ թերթերը երբ հոս կը հասնին, այս հեռաւոր անկիւններուն, գիւղերուն մէջ քիչ մը կարդալ գիտցող ամէն հայ անյագօրէն քաղաքական-լուրերուն է որ կը յառէ իր ուշադրութիւնն ու աչքերը, անոնց մանուածապատ, շատ անգամ հակասական ցանցին մէջ իր համար մխիթարական հետևութիւն մը, մխիթարական լոյս մը գտնելու։ Դուք կրնաք երևակայել թէ այդ հետևութիւնը կամ լոյսն ալ որքան մութ ու պղտոր կրնան ըլլալ, երբ վերը մայրաքաղաքին մէջ լարուած գրաքննութեան արգոսի աչքերը վաղուց ամէն բան իրենց ապակիէն մէջէն անցուցած աւրելու չափ բեկբեկած են։

Ահա այս վիճակին, այս տուայտանքին, այս ահռելի իրականութեան մէջ է որ հայը կըսկսի նոր տարին. թէ յաջորդող օրերը դեռ ի՛նչ վշտի, արցունքի ու ցաւի անակնկալներ պահած են, այդ թէև այժմէն չենք կրնար ըսել և որուն կը հաւատանք սակայն. բայց ուրախութեան, սփոփման, հաւատքի օրեր, ո՛չ, չենք ուզեր համոզուիլ։

ՆԱՄԱԿ ԳԱՂԱՏԻԱՅԷՆ

3 դեկտեմբեր 1901

Տեղւոյս արդի դժուար կացութեան վրայ կուզենք հետևեալ տեղեկութիւններն հաղորդել ձեզ համառօտիւ։

Պոսնացի գաղթականներ. — Կառավարութիւնը չենք գիտեր ինչ գաղտնի նպատակաւ այս վայրենիները ամիսներէ ի վեր շարունակ հոս բերել կուտայ հազարներով և ժամանակ մը խաներու, տուներու և մզկիթներու մէջ պահելէ և քաղաքիս ամէն վիճակին տեղեկացնելէ վերջ կը ղրկէ շրջակայ քրիստոնէաբնակ գիւղերն ու քաղաքները։ Տարիէ մը աւելի է որ օրական երեք հարիւր ոսկի գաւառական սնտուկէն դրամ կը քաշուի ատոնց. այս առթիւ կառավարական սնտուկի դրամական անձկութիւնը աննկարագրելի է. պաշտօնէից ստորադաս մեծամասնութիւնը իրենց յետնեալ ամսականները չկրնալով ստանալ կը դիմեն ժողովուրդը կեղեքելու։ Բաց աստի կառավարութիւնը այս վայրենաբարոյ գաղթականները քաջալերելու համար և ոչ մէկ միջոց կը խնայէ. բնակութեան վարձ չեն վճարեր. խաներուն վարձքը կառավարութիւնը կը վճարէ. մզկիթները վարձք չունին. մնացեալները ժողովրդեան ամէն դասակարգի պարապ տուներուն մէջ բռնի զետեղուած են. վարձքին կէսը կը խոստացուի և չի վճարուիր։ Այս վայրենիներն ալ կարծես մոնկոլեան և թաթար ցեղերու նման ոչ թէ շինելու, այլ միշտ քանդելու, աւերելու ընդունակ են. ուր որ բնակին, հոն այլևս անբնակելի կը դառնայ։ Կառավարութիւնը այս անպիտաններուն ձմեռուան վառելանիւթն ալ ամէն օր ձրի տալովը միասին կրկին կերթան քաղաքիս շուրջը հայերու պատկանող այգիներու և պարտէզներու դալար ծառերն ալ կտրելով կը բերեն կը վառեն։ Արհեստ չունին. շատ քիչերը տրեխի նման տեսակ մը ոտքաման շինելով, հաց ծախելով և փայտահատութեամբ կըզբաղին։ Քանի մը ամիս

առաջ՝ „մենք դրամ կուզենք որ ուտենք“ ըսելով՝ կառավարութեան տունը խուժեցին, դէֆթէրտարը ծեծեցին, բայց կրկին կառավարութիւնը իրենց ուզածը կատարեց։ Ասոնք ամէն կերպով գոհ թողնելու և ուզածնին կատարելու համար՝ ամէն օր իրատէներ կելլեն։ Վերջերս կրկին իրատէով մը յանձնաժողով մը կազմուեցաւ անկախ ոևէ միջամտութենէ՝ գաղթականաց համար շրջակայ հայաբնակ գաւառներու և գիւղերու մէջ կամ մօտը տուներ շինելու համար, որոնց նախագահն է կայսեր թիկնապահներէն Սատի փաշա։ Այս յանձնաժողովն ամէն քաղաք և գիւղաքաղաք մասնաճիւղեր ունի, որոնց պաշտօնն է ամենայն ուշադրութեամբ հսկել գաղթականներու զետեղման և հանգստութեան։ Քաղաքիս մէջ 54 տունէ բաղկացեալ թաղ մը շինուեցաւ և օգոստ. 19-ի գահակալութեան տարեդարձին՝ բացումն կատարուեցաւ և բոլոր տուներու բանալիները գաղթականաց յանձնուեցաւ։ Ասոնց համար հնարուած դրոշմաթուղթի հասոյթը իրենց օրապահիկին հազիւ մէկ մասին կը բաւէ։ Տուն շինել տալով՝ Յանձնաժողովն իանէի անուամբ սկսաւ բռնութեամբ դրամ հաւաքել, որն ժողովրդեան մեծ պատուհաս մ՚եղաւ։ Որ գիւղի մէջ քանի տուն շինել տալ որ որոշուած է, նոյն գիւղի ժողովուրդն ստիպեալ է շինելու, հոգ չէ թէ մարդ գլուխ քանի մը ոսկի բաժին իյնայ. հակառակողն կը բանտարկուի և կը գանակոծուի. մէկ զոյգ եզ ունեցող աղքատ գիւղացիներու իրենց կամերէն բռնի քաշելով հունձքը մէջտեղ թողուցին և շինուելիք տուներու համար քար, փայտ կրել տուին, ասոնց համար եղած բոլոր դիմումներ, աշխատանք, աղերսագիր, հեռագիր իդերև ելան. օրինակներ շատ են. Տէնէկ, Պատէն, Սթանոզ և ուրիշներ։ Սթանոզ քաղաքէս չորս ժամ հեռու հայաբնակ գիւղ մ՚է. ստիպեալ է 37 տուն շինել, մէն մի տուն երեք սենեակով, որուն 500 ոսկիէն աւելի դրամ պէտք էր, չմոռնամ նաև ըսելու, թէ տուն շինելու համար բազէին մեծ մասը քրիստոնեաներէ կը գանձուի. գաղթականաց շատեր երկրագործական սնտուկէն որչափ դրամ, եզ և գործիք որ առած են, բոլորն ալ ծախած ու կերած են։

Տուրքի գանձում.—Պետութեան պիւտճէին անլուր նեղութեան պատճառաւ, կառավարութիւնը իր բոլոր ուշադրութիւնը տուած է տուրք գանձելու, որով կարելի ըլլայ պետական սնտուկին ահագին կարօտութեան մէկ մասն լեցնել. հարկահաւաքիչները թէ քաղաքը և թէ շրջականները յարձակելով աղքատ ժողովրդի վրայ, ինչ որ գտնեն կառնեն, դրամ, կով, ոչխար, ցորեն և կահ կարասիք և ամուրդի հանելով ինչ գին որ գտնէ կը ծախէ, հոգ չէ թէ անդին խեղճ աղքատը անօթի կը մնայ։ Զարմանալին այն, է որ գանձուած դրամներու փոխարէն ընկալագիր ալ չի տրուիր, անշուշտ ապագային կրկին պահանջելու դիտաւորութեամբ։ Սուն-կուրլու, որ գայմագամանիստ քաղաք մըն է, տուրքի գանձման համար աղքատ կնկան մը ուրիշ մէկ բան չգտնելուն՝ տան մէկ մասի գերանները քակեցին և ծախելով տուրքին հաշուեցին։ Հոս քանի մը ամիս առաջ նոր կալուածով համար եղաւ և ըստ օրինի իւրաքանչիւր մարդու ինչ տուրք որ որոշուած է իրեն հաղորդուեցաւ, բայց հիմա երբեմն մարդոցմէ իրենց ծանուցածին կրկինն կամ եռապատիկը կը պահանջեն, առարկելով թէ առաջուց քիչ գրուած է. վայ անոր որ հակառակելով կը բողոքէ, յանձնաժողովը բողոքած օրն իսկ ուզածին կրկինն կը պահանջէ և կըստիպէ վճարելու. ասոնց օրինակներն խիստ շատ են։

Երկու ամիս առաջ կայսեր մէկ իրատէն ելաւ, իբր թէ այլևս մահմէդական և ոչ-մահմէդական բոլոր հպատակներն անխտիր պիտի նկատուին և պիտի վայելեն խաղաղութիւն, պաշտպանութիւն, երջանկութիւն հաւասար, սակայն դեռ ամէն ինչ դեռ իր առջի վիճակովը կը շարունակուի և օրէօր ալ վատթարանալով է։ Հայու մը Պոլիս երթալու համար անցագիր առնելն գրեթէ անկարելի է. շատերը կ՚ըսեն թէ մինակ վաճառականներու ներելի է. իսկ վաճառականաց կ՚առարկեն թէ քանի մը հարիւր ոսկինոց ապրանք առնելով վաճառական չ՚ըլլար, քանի մը հազար ոսկինոց առնելու է ալն։ Հայ վաճառական մը կար, որ ստիպեալ էր Պոլիս երթալու, շատ աշխատեցաւ. ոստիկանապետը կաշառ առնելով խոստացաւ անցագիր տալ և արտօնեց, բայց մարդահամարի տեսչութեան պաշտօնեան արգելք եղաւ առանց բանաւոր պատճառ մը ցոյց տալու, անշուշտ ինքն ալ կաշառուած չըլլալուն համար. մարդը ստիպեալ քանի մը ոսկի ծախսով հեռագրեց ոստիկանութեան նախարարին և հազիւ ամիս ու կէս վերջ պատասխան առնելով կրցաւ երթալ։

Ամիս մը իվեր Սիվրիհիսարի մէջ պատահած ձերբակալութիւնք ուշագրաւ են։

Ժամանակին մսագործ և յետոյ չալընի, վերջ կեղծբժիշկ Պողոս անուն վատ անցեալ ունեցող անձ մը ուրիշ՝ հայութենէ Ֆրքութեան դարձող՝ Պողոսի մը հետ միանալով, գայմակ մին և զատին թելադրութեամբ մատնութիւն կը կարարեն։ Ցիշեալ Պողոս շատ անգամներ թէ Պոլիս գտնուող Սվրիհիսարցիներու և թէ բուն իսկ Սիվրիհիսարի մէջ ծանօթ հարուստներու կը դիմէ դրամական օգնութիւն ուզելու, սակայն յիշեալներն զինքն լաւ ճանչնալնուն կը մերժեն. ասոր վրայ Պողոս գայմագամի անուշ շողոքորթութիւններէն խաբուելով անոր հետ միասին Պոլիս կերթայ և հոն ուղղակի ոստիկանութեան նախարարին կուտայ իր մատնութեան գիրը։ Անմիջապէս Աֆիոն Գարահիսարէն սիվրիհիսարցի տօքթօր Արապեան ընդ հսկողութեամբ Պոլիս կը բերուի. Պոլիս բնակող ուրիշ սիվրիհիսարցի մը՝ գօմիսիոնճի Պետրոս կը բանտարկուի. մէկ օրուան մէջ Սիվրիհիսար $^{20}/_{30}$ տուն կը խուզարկեն և քաղաքին պատուաւոր հարուստներէն տասը հոգի բանտը կը նետեն. ցուրտին, երկու օր առանց հացի չոր տախտակների վրայ սպասեցնելէ յետոյ՝ կըսկսին հարցաքննել։ Ասոնց վրայ ծանրացած ամբաստանութիւններն խիստ ծիծաղելի են. մինակ մէկը յիշենք. Գէորգ Զէթինեան, որ բանտարկուողներէն մէկն է, ամբաստանուած է, թէ Պոլիս գտնուած ժամանակ կայսեր վրայ զէնք պարպած է և յետոյ անյայտ եղած։ Ուրիշներուն ալ ասոնց նման բաներ են։ Այժմ բանտը գտնուողներն են՝ Կարապետ Հէլվաճեան, Գէորգ Զէթինեան, Կարապետ Պալեան, Լևոն Ներսէսեան, Վարդանեան և Յակոբ էֆ. անուն մահբէմէի անդամ մը։ Զրպարտութեամբ պառկած ըլլալուն համար մինչև հիմա Սիվրիհիսարէն կայսեր, եպարքոսին, պատրիարքարանի 50 լիրայէն աւելի ծախսով հեռագիր տուած են, բայց ցարդ պատասխան մը չէ առնուած։ Գայմագամն ի վարձատրութիւն 4-րդ մէճիտիէի նշան ստացաւ, իսկ մատնիչ Պողոսներն Կ. Պոլիս ընդ հսկողութեամբ կըսպասեն կոր։

Շրջականներն ապրանք տանելով վաճառելն գրեթէ

անկարելի դարձած է. գողութիւն, սպաննութիւն անպակաս են միշտ։ Օխճանլը Մխտոյ և ընկեր աւազակներ չորս կողմն ահ ու սարսափ ձգած են. կառավարութեան քթին տակ կը կողոպտեն և կը չարչարեն ժողովուրդը, բայց որո՞ւ հոգ. թերևս այդ աւազակները կառավարութեան պաշտօնէից մէջ իրենց ընկերներն ունին, որոնք կողոպուտին կէսն անոնց կը բերեն, ապագային զիրենք պաշտպանելու համար։

ՆԱՄԱԿ ՏԻՎՐԻԿԷՆ

21 յունուար 1902

Անցեալ Նամակովս արդէն գրեցի պաշտօնական Թալանի մասին։ „Բարեխնամը“, աւարէն յետոյ, մասնաւոր իրատէով տուրքերու յետաձգում հրամայած էր (բարով ու խերով չի հրամայեր). անկից իվեր երկու-երեք տարուայ պէտէլները, կարծես յատուկ նպատակով կուտած, մէկ անգամէն գանձել կուզեն այժմ, ասոր համար գործածելով ամէն անխոստովանելի միջոցներ։ Ամսէ մը իվեր թահսիլտար անուանեալ գաղանները, մասնաւորապէս հայ գիւղերը ցրուած, տուրք գանձելու անուան տակ, չարիք չմնաց որ չի գործէին՝ վրանին եփած ջուր լեցնել պաղ ջուր լեցնել, երեսին թրիք բսել, թրրիք խմցնել, մահմերձ ծեծել, սովորական բաներ դարձան. անպատկառօրէն գինովնալով անպատիւ առաջարկութիւններ, հայհոյութիւններ ընել սովորական խօսակցութեան տեղ բռնած ըլլալով, զանց կ'ընեմ գրել։ Այսպէսով թալանեցին ամէն ինչ՝ ուտելիք, անկողին, հագուստ. այժմ գրեթէ բոլոր ժողովուրդը ամենածայրայեղ թշուառութեան մէջ կը գտնուի. եթէ այսպէս շարունակուի, գաւառիս հայ ազգաբնակութիւնը շուտով կըսպառի, զի թշուառութեան հետևանք տարափոխիկ հիւանդութիւնները սկսած են մուտ գտնել։ Կառավարութիւնը հարիւրին հինգ զեղջ մը հրամայած էր ներկայ տարուոյս տուրքերը ամբողջապէս վճարողին, և իբր մեծ շնորհ մը մասնաւորապէս ծանուցած։ Սակայն այդ միջոց մը եղաւ որ ինքը յաչս օտարաց մեծարուի և օգտուեցան միայն տաճիկ կապալառուները, զի հայոց, ինչպէս վերը ըսի, յետնեալ տուրքեր գոյութիւն ունենալնուն՝ գանձածը հին հաշուոյն կ'արձանագրուի. այսպէսով թէև մեզի շնորհուեցաւ, բայց տաճիկները օգտուեցան։

Կառավարութիւնը կամայականութեանց կեդրոն մը դարձած է. թիւրքերն ալ մեծապէս դժգոհ են այս ընթացքէն և իրենք ալ նեղն են, բայց կը վախնան խօսելէ. տուրքերու հաւաքումը օրըստօրէ կը սաստկացնեն, եթէ այսպէս տարի մը տևէ, ինքնին լուծուած պիտի ըլլայ մեր խնդիրը, մենք լուծուած ըլլալով։

Սահմանագլխուն վրայ զանազան դէպքերու լուրեր կը շրջին հոս. նաև մաս մը հայեր Սուրբ Կարապետի վանքն (Մուշ) ապաստանած և հոն պաշարուած են կ'ըսուի. հոս զանազան տարաձայնութիւններ շատ կան։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

25 յունուար 1902

Սալմաստում լուր է պտտուած, որ Մարշիմոնի հպատակ ասորիները յարձակում են գործել քրդերի վրայ և մեծ կոտորած են արել. աւերել են 4 քրդական գիւղ, սրի անցկացնելով բոլոր բնակիչներին՝ մեծ ու փոքր, մօտ 25 կին և աղջիկ էլ, ամենաընտիրներից, գերի են վերցրել. մանրամասնութիւնները պակասում են։

Բայազէդում օրէցօր խստութիւնները աւելանում են. տեղւոյն կառավարիչ միւթէսարիֆը յայտնի Զէքի փաշայի եղբայրն է, որը ընթանում է իր եղբօր ուղղութեամբ։ Միւթէսարիֆը լարուած է պարսիկ հիւպատոսի դէմ, այնպէս որ այս վերջինը ստիպուած է իր մարդիկներով ու զէնքով պաշտպանուել։ Միւթէսարիֆը հրապարակի վրայ ծեծել է տուել հիւպատոսի գրագիրն ու ծառաները. մտադիր են եղել մինչև անգամ ծեծել հիւպատոսին, բայց միջամտել են ու չեն թոյլ տուել։ Ամէն մի պարսկահպատակի չարչարում են և մի քանիսին բանտարկել են։ Անցեալ շաբաթ մի հայ տղայ դիմել էր պարսկական հիւպատոսին անցագիր խնդրելու՝ Պարսկաստան գնալու համար. կառավարութիւնը հետևում է տղային, գտնում ու բանտն է գցում։

Համիդիէների ռոճիկները դադարեցնելու ու նրանց զէնքերը հաւաքելու մասին եղած լուրերը շատանում են. տեղ տեղ զէնքերնին արդէն առել են. թէ ի՞նչ գաղտնիք է դա, դեռ ևս չի պարզուած։

Տաճիկ կառավարութիւնը չի դադարում իր խորամանկ ռէժիմը առաջ տանելուց։ Նա շարունակ լարում է յիմար ու միամիտ քրդերը՝ աղան, պէյն ու ցեղապետները իրար դէմ, կուռեցնում է ու վերջը ստիպում է նրանց դիմելու (իրենց, տաճիկների ասածի նման) լաստիկի (առաձգական) դատարանին, այնպէս որ նրանց ինդիրը ցանկացածին չափ երկարում ու ձգւում է. քիւրդ աղան ու պէյը ստիպւում են ամիսներով քարշ գալ հիւքմէթի դռները, եղոտելով սուլթանական պաշտօնեաների տրեխ բերանները։

Աշնան սկզբում էր, երբ Ցապաղում պատահած քրդական կռուից յետոյ, քրդերը Վան գնացին դատի, մինչև օրս էլ, այս մի քանի ամսւայ ընթացքում, ոչ մի հարց ու փորձ չի եղել, ու նրանք, երկու դատախազները, տրորուում են դռնից դուռ փողեր վատնելով։ Դրանցից մի քիւրդ պէյ, խելօք է գտնուել ասելու որ „դուշմանը այս դուռը չգիմի և ոչ մի հիւանդ՝ տաճկի դեղով չբժշկի“ և դրանց նման հազարաւորներ։ Ոչ մի ժամանակ չի լինում, որ թիւրք դատարանից պակաս լինի քիւրդը—նրա վէճն ու դատը։ Տաճիկ պաշտօնեաները սիրում են զբաղուած լինել դալմաղալով—միմիայն այնպիսի դալմաղալներով, որ իրենց փորի ցաւը կը հոգայ։

Վանում առել են մի քանի քիւրդ պէյերից նոր սիստէմի հրացաններ, նրանց (համիդիէների) այնքան դիմումներին, տաճիկ կառավարութիւնը առարկում է թէ „մենք կոտորածների ժամանակ հայերից էլ այդպիսի զէնքեր ենք առել, նրանց մասին եղած հարց ու փորձի ժամանակ, ձեր խնդրոյն էլ կը նայենք“. յիմար քիւրդերը սպասելով սպասում են դեռ, թէ իրենց հրացանները պիտի վերադարձնեն։

Տաճիկները շարունակում են իրենց ինտրիգները պարսիկների դէմ։ Բայազէդի կառավարիչը շարունակ գրգռում է քիւրդ ցեղերին, որ գնան ու պարսկական սահմաններից աւար բերեն։ Փաշան ասել է, որ թոյլ պիտի տայ տաճիկ զինուորներին առաջ գնալ պարսկաց սահմանում, մի քանի ժամ հեռաւորութեան վրայ, պէտք եղած աւերումներ գործելու։ Այս բոլորը առաջ է

գալիս միւթեսարիֆի և պածկասահմանագլխում ապրող պարսիկ Փ ա շ ա խ ա ն ի միջև բորբոքուած ատելութիւնից, հէնց դրա համար էլ միւթեսարիֆը շարունակ աշխատում է վէճի ու խռովութիւնների տեղի տալ ու պաշտօնապէս տաճկական զօրքերը այդտեղ ուղարկել իրենց բարբարոսական քաջութիւնը ի գործ դնելու համար։

Պարսիկ կառավարութիւնը բնաւ չի մտածում թէ միւթեսարիֆը ի՞նչեր է սարքում իր գլխին։ Խեղճ պարսկասահմանաբնակ րաեաներին վիճակուած է տանջուել իրենց սև ճակատագրից օրէցօր վտանգը սաստկանում է։

Ջէքի փաշայի եղբայրը ինքնագլուխ գործելու և միջից դուրս գալու քաջութիւնն ունի։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՏԱՍՆՈՒԹՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 11 մարտ 1902

Մեծանցեալ Խրիմեան Թիֆլիս է դարձել։

Ի՞նչը քշեց ծերունի գահակալին դէպի Թագաւորանիստ քաղաքը։ Արդեօք Արարատեան կիսաքանդ աթոռի իրաւազուրկ, երկչոտութեան մէջ թաղուած վիճա՞կը, թէ ա՞յն, որ „Վասպուրականի արծիւը“ իր մէջ այլևս ոչինչ տենչանք, ոչինչ իղձեր չի պգում, բայց եթէ տենչանք աննպատակ ճանապարհորդութիւնների, աննկատելի թէ հային և թէ „չինովնիկին“, անհետաքրքիր թէ պրիստաւին թէ նահանգապետին։

Անցած ժամանակնե՞ր։

Կար ժամանակ, որ „ամենայն հայոց կաթողիկոսը“ երբ ոտքը Էջմիածնից դուրս դնէր՝ ամբողջ Կովկասը կը դղրդար. տակն ու վրայ կը լինէր ամբողջ գիծը՝ Ջանգիից մինչև Կուրի ափը. ոտքի կը կանգնէին աստեղազարդ գեներալներ և երևելի ու աներևոյթ լրտեսները կայսերական գահի. իրարանցում, շշուկ, յարգանք, հարցական նշաններ։ Իսկ ա՞յժմ... Այժմ նա գնում է և գալիս, ոչ ոք չի տեսնում նրան, ոչ ոք նրան չի հարցնում. „Ի՞նչ կայ, Հայրիկ, ինչո՞ւ եկար և ո՞ւր կերթաս“...

Սակայն այս անգամ,—ասում է վերջին լուրը՝ առնուած Կովկասից — նա ճամբայ է ելել՝ գործով, ցաւով, կառավարչապետին դիմումն անելու յոյսով, գաղթականների գործին դարման տանելու երազով. այս ե ր ա զ ո վ, որովհետև դիմումների արդիւնքը երազ է մնում, աջողութիւնը՝ երազական։

Եւ միշտ նոյն պատմութիւնը։ Հետը մի եպիսկոպոս, յետևից մի քանի վարդապետներ, շքանշանը կրծքին, գաւազանը դողդոջուն ձեռքին և իբրև անժխտելի իրաւունք՝ ե ր կ ո ւ շ ա թ ի ր կառքի վրայ, նա այց կերթայ փոխարքայական պալատը։ „Նորին պայծառափայլութիւնը ընդառաջ ելաւ Նորին վեհափառութեան մինչև սանդուխտների գլուխը և բարեհաճեց համբուրել Նորին օծութեան աջը“։ Յետոյ՝ „երկարատև խօսակցութիւն“, փոխադարձ ստախօսութիւն, որ „սիրալիր տեսակցութիւն“ անունն է կրում ցենզօրական մամուլի էջերում, ապա մի քանի օր շարունակ շշուկներ փողոցում, նախ՝ „կարևոր բաներ են խօսացել“, յետոյ՝ „ասում են խոստացել է“ և ի վերջոյ՝ „է՜հ, բան չունէք“... Ու դարձեալ լռութիւն ու հանգիստ՝ ճահճի երեսին.

Հանգիստ է, այո, պալատական ճահիճը։

Իսկ հայ գաղթակա՞նը։ Նա է՞լ հանգիստ է։ Զգա՞ց արդեօք, թէ Էջմիածնից մեկը մեկնեց՝ տարուած նրա ցաւերով, որ այդ ցաւերի մասին խօսք եղաւ, գեղեցիկ, պճնազարդ պալատում, թէ այդ անցողական լուրը ա ն ց ո ղ ա բ ա ր անգամ չէ թափանցել այն գ ո մ ե ր ը, ուր ապաստան է գտել թիւրքահայ փախստականը։

Փախստակա՞նը։ Փախաւ, այո, նա իր այրուած, խորտակուած վաթանից։ Արեան օրերին էր այդ։ „Փախի՛ր, ով կարող է“, հնչեց երկրի մի ծայրից միւսը։ Եւ փախան հայրենիքից, վաթանից, ծեր ու ջահել, կին ու աղջիկ։

—Հրէն է՜, սահմանը, գոչեց ջլոտ, կիսամերկ ալաշկերտցին, ձեռքը արևելք մեկնելով։ Եւ սահմանագլխի բլրին կանգնած, կուրծքը լի վաթանի վշտերով, նա վերջին անգամ յետ նայեց։ Խօսք չէր դուրս գալիս բերանից. ձայնը որկորում չորացաւ։ „Մնաք բարով սարեր-ձորեր, և դուք կանաչ դաշտեր, աղբրակներ. ինձի չմոռնաք. ես ձեզ չեմ մոռնալու“։

Եւ չմոռացաւ։ Երկար տարիներ սպասեց, միշտ աչքը տնկած վաթանին։ Ու ամէն գիշեր, անկողին մտնելիս, նա միշտ այն էր մրմնջում. „Մնաք բարով սարեր-ձորեր, ինձի չմոռնաք, ես ձեզ չեմ մոռնալու“։

Երկար սպասեց։ Այն օրից, երբ Սասունի ժայռերը կարմիր արտասուք թափեցին, ութը տարի անցաւ։ Ինչ տարինե՜ր։ Տան տեղ՝ գոմեր, հացի տեղ՝ գարի, աշխատանքի փոխարէն՝ նահատակութիւն, բարեգործական դիմակի տակ՝ նզխատինք։ Նրա անունով փող հաւաքեցին, նրան չհասցրին. նրա քրտինքով արտ ցանեցին, հունձը նրանից խլեցին։ Բարի գիւղացու մօտ ապաստան գտաւ, եղբայրը դարձաւ. ոստիկան եկաւ „արգիլուած է“ ասաց ու քշեց։ Քաղաքում պարապմունք որոնեց, տէրը քիչ ամրացրեց. դարձեալ ոստիկան. գլուխը քարին խփեց, կօնսուլի դուռը մաշեց, երեխաներից կտրեց՝ անցագրի տուեց, դարձեալ ոստիկանը եկաւ, հացի հետ թուղթն էլ խլեց։

Ու այսօր 50 հազար մարդ, երկու կրակի մէջ, երկու քարի արանքում, ոչ գնալ կարող են ոչ մնալ, առանց հողի, առանց ապաստանի. լեզու չունեն որ բողոքեն, ուժ չունեն, որ կռուեն։ Ո՞ր ջուրն ընկնեն...

Ո ր ջ ո ւ ր ն ը ն կ ն ե ն, երևի այդ էր իմաստը հայոց կաթողիկոսի քաղաքավար, մեղմ, աղերսալից խօսքերի, ուղղուած իշխան Գոլիցինին, պալատի սենեակներում։ Եւ իշխանը պատասխանեց. „բարձրագոյն հրամանն է“։ Եւ հիմնուած այդ ամենափրկիչ հրամանի վրայ 1901 Նոյեմբերին այդ „չար հրեշտակը“ արձակեց հետևեալ պ ա շ տ օ ն ա կ ա ն շրջաբերականը, ուղղուած կովկասեան նահանգապետներին

«Ի կատարումն Բարձրագոյն հրամանների, որոնք տրուած էին 1901 թուի փետրուարի 1-ին և յուլիսի 29-ին՝ այն թիւրքահպատակ հայ փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի մասին, որոնք զանազան ժամանակ, սկսած 1893 թուից, գաղթել են մեր սահմանները, առաջարկում եմ ձեր գերազանցութեան յայտնել ձեզ յանձնուած նահանգի սահմաններում գտնուող հայ փախստականներին հետևեալը.

1) Զանազան ժամանակներում, սկսած 1893 թուից, Կովկասեան երկրի սահմանները իրենց կամքով եկած թիւրքահպատակ հայերին, որոնք ցանկանում են կամաւորապէս, իրենց հաշուով, հեռանալ կայսրութիւնից, համապատասխան աջակցութիւն ցոյց կը տրուի այդ բանի համար։

2) Մնացած այն բոլոր հայ-փախստականներին, որոնք չեն ցանկանայ գաղթել արտասահման, թոյլ է տրւում մնալ իրենց այժմեան բնակած տեղում եւ գրւել գիւղական համայնքների վրայ, եթէ այդ բանին կը համաձայնւեն վերջինները (141—146 յօդ. 9 հատ. առանձին յաւելւածի). հակառակ դէպքում, 1899 թւի հրատարակութեան 9-րդ հատորի 564-րդ յօդւածի 9-րդ պրակի զօրութեամբ, նրանց թոյլ է տրւում գրւել մէշչանների (քաղաքային) հասարակութիւնների վրայ։ Միեւնոյն ժամանակ վերոյիշեալ անձերից նրանք, որոնք կը ցանկանան բնակութիւն հաստատել ներքին նահանգներում, թոյլ է տրւում, Ռուսաստանի հպատակութիւն ընդունելուց յետոյ, ճանապարհ ընկնել իրենց հաշւով՝ երկաթուղիների էժանացրած սակագնով, իրենց ընտրած տեղերը, Կովկասեան երկրից դուրս, եւ այդպիսի անձանց առանց արգելքի կը տրւեն պատշաճաւոր անցագրեր։

3) Թէ Կովկասեան երկրի սահմաններում մնացող եւ թէ ներքին նահանգները գնալ ցանկացող հայ-փախստականները պարտաւոր են ռուսաց հպատակութիւն ընդունել. իսկ ռուսաց հպատակութիւն ընդունել չցանկացողները պարտաւոր են անյապաղ հեռանալ ռուսաց կայսրութեան սահմաններից։ Միեւնոյն ժամանակ հայ-փախստականներին իրաւունք է տրւում այժմ եւ եթ Ռուսաստանի հպատակութեան մէջ մտնել, իբրեւ բացառութիւն 1899 թւին հրատ. 837 եւ 389 յօդւածների։

4) Հայ-փախստականները 190 թւից սկսած ենթակայ են զինւորագրութեան՝ կայսրութեան մնացած ազգաբնակութեան նման։

5) Գիւղացիների հողային բարեկարգութեան ժամանակ Կովկասում, ի. կէտում յիշած անձանց, եթէ նրանք կը վերաբնակւեն արդէն եղած գիւղերում, որոնք դեռ բարեկարգութիւն չունեն, իրաւունք չէ տրւում հողաբաժին ստանալ։

6) Քաղաքներից դուրս անշարժ գոյքեր ձեռք բերելու իրաւունքը Կովկասում թոյլ է տրւում գաղթական հայերին կամ նրանց սերունդներին ոչ վաղ, քան ռուսաց հպատակութիւն ընդունելուց քանի տարի անցնելուց յետոյ. եւ

7) Վերեւ բերած կանոնները տարածւում են այն փախստական հայերի վրայ, որոնք եկել են Կովկասի սահմանները մինչեւ 1901 թւի փետրւարի 1-ը. իսկ վերոյիշեալ ժամանակամիջոցից յետոյ եկածները դուրս են ուղարկւելու կայսրութիւնից։

Վերոյիշեալին կցում եմ, որ Բարձրագոյն հրամանը ի կատար ածելու կարգի մասին, հայ-փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի վերաբերմամբ, եւ առանձին ցուցմունքներ կը տամ ի ղեկավարութիւն։

Սենատոր-գեներալ-ադիւտանտ իշխան Գոլիցին

„Ցուցմունքներ կը տամ“...

Դրա մէջն է կարեւորը, վճռականը, իսկական օրէնքը... Շրջաբերականի միւս մասերը օրէնքի յ ի շ ա տ ա կ ու թ ի ւ ն ն է լոկ, այնքա՜ն դատարկահնչիւն իշխան Գոլիցինների համար, որոնք յիշում են օրէնքը, երբ հարկաւոր է ադմինիստրատիւ կարգադրութեան իսկական իմաստը ծածկել, քողարկել, երբ հարկաւոր է մ թ ն ա ց ն ե լ ժողովրդի առանց այն էլ մութ աչքերը։

Գաղտնի հրահանգներ, իհարկէ, տրւած են արդէն։ Ափսոս որ նրանք մինչեւ այժմ էլ դիւանական դարաններից դուրս սովորական մահկանացուներին յայտնի չեն։ Յայտնի են միայն մի քանի կէտեր մի ուրիշ գ ա ղ տ ն ի շրջաբերականից, տրւած ներքին գործերի մինիստրի կողմից իր ստորադրեալներին։ Ահա մի էջ նրանից.

«Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում Անդրկովկասի մէջ ապաստանած հայ գաղթականների անկանոն վիճակի վրայ։ Տեղեկագիրները հաստատում են, որ գաղթականների թիւը փոխանակ պակասելու, երթալով աճելու վրայ է։ Այս վայրկեանիս 40,000-ը անցնում է, եւ մեծ մասը ապրուստի միջոցներից զրկւած. առեւտրի յանցաւորութիւնը, ինչպէս նաեւ նրանց հոգալու անհրաժեշտ հարկը ոչ միայն ծանր բեռ է դարձել կառավարութեան համար, այլեւ անհանգըստութեան պատճառ դառնում։

«Ուստի առաջարկում եմ ձեզ, թէ Բարձրագոյն որոշման համաձայն, պէտք է ձեռք առնէք բոլոր հարկաւոր միջոցները՝ 1902 մարտ 1-ին ռուս հպատակութեան ստիպելու բոլոր հայ գաղթականներին։ Հարկաւոր է ուրեմն պատրաստել ցուցակները այն անձերի, որոնք հաւանականաբար պիտի օգտւեն այս օրէնքից, եւ որոշել նրանց տրամադրութիւնը ապագայ զինւորական ծառայութեան համար։ Հարկաւոր է պատրաստել նաեւ հողային արձանագրութիւններ, որպէս զի կարողանանք որոշել այն տեղերը, ուր ռուս հպատակութիւն ընդունող հայերը պիտի կարողանան օգտակար կերպով ճարտարւել. Այս նպատակի համար պիտի քննւեն այն հողերը, որ դուխօբօրները փորձ էին ածում նախապէս։ Պէտք է ուրեմն կարելի եղածին չափ շուտով ուղարկէք ձեր պատշաճ տեղեկագիրները ձեր պետերին»։

Ի՞նչ է իմաստը այս բոլոր շրջաբերականների, գաղտնի ու ոչ գաղտնի հրահանգների։ Ո՛հ, անշուշտ, եթէ կայսերական կառավարութիւնը կարող լինէր մոգական գաւազանով յետ դարձնել 50 հազար հայ գաղթականները, դա կը լինէր մի „նպատակայարմար“ լուծում այս անիծւած հարցի։ Սակայն այդ մոգական գաւազանը գոյութիւն չունի. հարկաւոր են ուրեմն այլ գաւազաններ։

Վերադարձնել հայ գաղթականներին դէպի երկիր, դէպի հայրենիք, ռուսաց կառավարութիւնը չէ ուզում։ Դա նրա քաղաքական հ ե ռ ա տ ե ս ու թ ի ւ ն ն է։ Ամբողջ 8 տարի է, նա այդ ծրագրին է դիմում։ Եւ ինչո՞ւ վերադարձնել, քանի որ այնքան տարիներից իվեր նրա տենչանքն է՝ ստեղծել Հայաստան առանց հայերի, մի Հայաստան, որտեղ հայ տարրը չլինէր խիտ, գերակշռող, թւով աւելի զօրեղ, տնտեսապէս ամուր։ Եւ այն դիւական տեսակէտի արդիւնքն էր, որ նա թոյլ տւեց հայ փախստականների ահագին խմբերին անարգել խուժել Կովկասի սահմանները։ Եւ ո՞վ է այն միամիտը, որ հաւատայ, թէ ցարի կառավարութիւնը անկարող էր, եթէ անկեղծօրէն ուզենար ստիպել օսմանեան իշխանութեանը՝ զիջանել եւ յետ ընդունել գաղթականներին, նոյնիսկ վերադարձնել նրանց գոյքը, հողը, տները։ Այդ նա չկամեցաւ, եւ դրա փոխարէն՝ սիրով ընդունեց սուլթանի ծրագիրը՝ 50 հազար հայերին տեղափոխել Կրէտէ, հեռու Կովկասից, հեռու Հայաստանից, հեռու հայկական բնակավայրից, այն շրջանից, որտեղ հայը վ տ ա ն գ ա ւ ո ր է քաղաքականապէս, „անհանգիստ“ ազգային ձգտումներով։ Սակայն այդ չարամիտ „ծրագիրը“ ջուրն ընկաւ. Խ ո ն ա ր հ գաղթականը քայլ անգամ չուզեց անել։

Շատ էլ զարմանալի չպիտի թւի այդ „պօլիտիկը“, որովհետեւ կայ դրանից աւելի անհաւատալի, աւելի համարձակ ծրագիր։ Դա կառավարչապետ Գոլիցինի վերջին գաղտնի զեկուցումն է, որ նա անցեալ տարի, Պետերբուրգ գնալով ներկայացրեց մինիստրների խորհրդին, իբրեւ փրկութեան մի նոր միջոց։ Երես առած Պետերբուրգի իր զօրեղ պաշտպանների ժպիտներից, հագած աստեղազարդ համազգեստը, կրկնապատկած իր դէմքի յաղթական գծերը, նա ներկայացաւ մինիստրական ժողովին։ Ժպիտներ քաղեց նա եւ դեռ չսկսած պաշտօնական բացատրութիւնները, աւետեց, որ գտել է վերջապէս վտանգաւոր հայ տարրից Կովկասը փրկելու միակ միջոցը։

Եւ նա եզրակացրեց այսպէս.

„... Կովկասը ռուսացնելու և հայկական վտանգաւոր սեպարատիզմը մէկ անգամ ընդմիշտ արմատախիլ անելու միջոցը այս է—չկայ այլ միջոց—գաղթեցնել հայերին Սիբիր, ազատել այդպիսով Անդրկովկասը հայկական „խռովայոյզների" ներկայութիւնից և նրանց տեղ հաստատել ներքին նահանգներից բերած ուղղափառ գաղթականներին"։

Տիրեց լռութիւն։ Ամենաուղղափառ շրթունքների վրայ անգամ սառեց ժպիտը։ Եւ մինչև իսկ զինուորական մինիստրը, Կուրոպատկին, որ երբեմն իբր կառավարիչ Անդրկասպեան երկրի, բաւական լաւ ճանաչում է „հայկական սեպարատիզմի" չափը, հարցրեց.

— Ի՞նչ էք կարծում, ձերդ պայծառափայլութիւն, ո՞րքան կը լինի հայ խռովայոյզների թիւը մի այնպիսի հայաբնակ կենտրոնում, ինչպէս Շուշին է կամ Երևանը։

— ?

— Մօտաւորապէս 50 կը լինի։

— Այո, համարեա այդքան։

— Ես ընդունում եմ նոյնիսկ, աւելացրեց մինիստրը, կրկնապատիկը՝ 100։ Եւ կարծում եմ, որ ամենալաւ միջոցը՝ „հայկական շարժումը" արմատախիլ անելու, է՝ կալանաւորել այդ 100 խռովայոյզները, դուրս բերել նրանց երկրից, և աքսորել Սիբիր։ Դրանով դուք կատարեալապէս ազատած կը լինէք երկիրը վտանգից, առանց աքսորելու մի ամբողջ ժողովուրդ դէպի Սիբիր։

— Իհարկէ, իհարկէ, կրկնեցին միւս մինիստրները։

... Զուրն ընկաւ բոլոր հայերը գաղթեցնելու քաղաքական ծրագիրը, որի վրայ նրա հեղինակը թափել էր իր ամբողջ հանճարը, բայց թիւրքահայ գաղթականներին „անյայտացնելու" նախագիծը մնաց կանգուն և ամէն օր հրահանգներ է, որ տրւում են այս ու այն իշխանաւորին մի կամ միւս նահանգապետից։ Նահանգապետները լաւ գիտեն, որ հայաբնակ գիւղերը և գաւառները գաղթականները իրենց մէջ ընդունել չեն կարող։ Չեն կարող ոչ այն պատճառով, որ չեն ուզում կամ թշնամաբար են տրամադրւած, այլ այն պատճառով, որ ուժ, միջոց, հնար չունին — հող չկայ։ Անհողութիւնը առանց այն էլ կոտրել է տեղական ազգաբնակութեան մէջքը։ Զիգ տարիներ են արդէն, որ այդ անհողութիւնը աւելի մահաբեր է դարձել ռուս գաղթականի արշաւանքի պատճառով, որոնք ներքին նահանգներից՝ կառավարութեան ձեռքով, ստիպողաբար քշւում՝ են դէպի Անդրկովկաս, կորցնելով իրենց ապրուստը, առողջութիւնը, հանգստութիւնը և ապագան։ Մի ժողովուրդ դժբախտացնելու նպատակով կառավարութիւնը դժբախտացնում է և մի այլ ժողովուրդ։ Հային իբրև քաղաքական, ազգայնական մարմին սպանելու համար՝ ցարի իշխանութիւնը անուղղակի սպանում է ռուսին, զէնք դարձնելով նրան, խլելով նրան իր երկրից, իր հողից, որի վրայ նա արմատ գցած մի մարմին է։ Դա կրկնակի չարագործութիւն է, հրէշաւոր չարագործութիւն, ծնած ճիւաղային ուղեղների մէջ...

Կանգնած է Թիֆլիսի փողոցում ռուս գաղթականը՝ մերկ, բորիկ, կեղտով ծածկւած, շրջապատւած երեխաներով, անապաստան. նա աղերսում է, աղերսում է՝ հաց, շոր, փող, ճանապարհածախք։ Եւ անվերջ են նրանք։ Գալիս են գարնան, գալիս են աշնան։ Ոստիկանութիւնը չի օգնում, չի օգնում և կառավարութիւնը։ Ինչո՞վ օգներ Գանձարանից տւած գումարի կէսը, մեծ մասը գողացւած, „չինովնիկների" որկորն է մտած։ Եւ դարձեալ պիտի օգնի հայը, տեղացին, Կովկասի բնակիչը, որի հացը, հողը, տեղը խլելու է գալիս ռուս մուժիկը, կառավարութեան այդ դժբախտ զոհը...

Տալիս է կովկասեցին, օգնում է նա հիւսիսէն եկած վիճակակից գիւղացուն, սակայն երբեմն, քաղաքական իրարանցման դժբախտ օրերին, սառչում, մարում է կարեկից ոգին, թուլանում օգնող ձեռքը։ Եւ ահա սրտմտութեան սոսկալի տեսարանը հանդէս է գալիս իր ամբողջ մերկութեամբ։

— Կորէ՛ք, հանգիստ թողէք մեզ։ Եկել էք մեր հողը, մեր տունը, մեր տեղը խլելու, և դեռ ուզում էք, որ մենք ձեզ հաց, փող, ապաստան տանք, կարեկցենք...

Եւ մեկնած ձեռքը մնում է սառած այդ անսիրտ մերժման հանդէպ, այդ դաժան իրականութեան դիմաց, այնքա՞ն կարեկից երէկ կամ մի քանի ժամ առաջ...

Մարդակերութիւն է այդ, մարդատեցութեան մի անիծւած տեսարան, ստեղծւած „չինովնիկութեան" ձեռքով, այն դժոխային մեքենաների շնորհիւ, որոնք իրենց այլանդակ պտոյտների մէջ մաշում են այն բոլորը, ինչ բարձր է, ազնիւ, մարդկային, դնելով նրա տեղ ազգերի և անհատների կրծքի մէջ, ատելութեան անշէջ քուրան, գազանը, փոխադարձ ատելութեան դժբախտացնող հնոցը...

Խեղճ հայ գաղթականներ։

Խեղճ ռուս գաղթականներ...

Եւ կը մնան այդպէս անօգնական, անտէր, անապաստան այդ 50 հազար դժբախտները, որոնց քշել է սուլթանը, որոնց քշում՝ է և ցարը։ Գիւղից գիւղ, գաւառից գաւառ, Կովկասից ներքին նահանգները, ներքին նահանգներից դէպի զօրանոցները, ոստիկանապետի ձեռքից գիւղապետի ձեռքը, որպէս զի հալւին՝ ինչպէս այրւող մոմ, անհետանան՝ ինչպէս քամուն տւած մոխիրը...

Ինչո՞ւ, ո՞ր յանցանքի, ո՞ր մեղքի, չարագործութեան ո՞ր տեսակի համար։ Նրա համար, որ մարտիրոս ժողովրդի այդ բեկորը չուզեց քրդանալ Թիւրքիայում և չի ուզում մուժիկանալ Ռուսաստանում։ Ով վայրենի չէ, ինչպէս քիւրդը, նա ատելի է սուլթանին. և ով մեռած, ստրուկ չէ, ինչպէս մուժիկը, նա ատելի է ցարին։

Մոռացած այդ ճշմարտութիւնը՝ պատրիարքը սուլթանին է դիմում։

Մոռացած այդ իրողութիւնը՝ կաթողիկոսը ցարին է աղերսում։

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

ՓԼԴԱՑՈՒՆԵՐԸ ԵՒ ԱՐՑԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՑՈՒԹԻՒՆԸ — Փէդայիներու խիզախ եւ յաղթական ընդհարումները բռնապետութեան վոհմակներուն դէմ, անոնց արհամարանքը, որ „վրէժխնդրութեան" աղուոր դիցուհիի մը պէս դուրս կը սլանայ Հայաստանի արիւնդաշտերէն, իր բոլոր փառապանծ ուժգնութիւնով, հայ ժողովրդին պաշտումը դէպի իր հերոսները, որոնք

„Բոլորը մեր ցաւերը, բոլորը մեր քայքայումը սեւ օրերուն,
Իրենց ներսի դէն մոլեգնաբար տառապեցան"

արծաթանք գտան աշխարհի չորս ծայրերը, աւետելու հայութեան

զաւակներուն թէ, ինքը կը յաղթէ, եթէ իր բազուկներուն վրայ դնէ յոյսը, եթէ շարժի եւ զէնք հայթայթէ իր թշւառ, բայց քաջասիրտ եղբայրներուն։

Տարօնի մէջ մեր ազգային հպարտութիւնը զգլող դէպքերը, եկան անգամ մըն ալ հայ ժողովրդին ներշնչեցին գործով, հաւատք դէպի Յեղափոխութեան ազատարար դերը։ Այնքան տատանումներէ ետքը, պատմութեան եւ իրականութեան առողջ փիլիսոփայութիւնը կուգայ փսփսալ մեր ականջին, թէ հայ ազգին բախտը աստուածներէն ու դիւանագէտներէն չէ կախուած, այլ մեր ափերուն մէջն է։

Շատեր կը սիրեն որ պօէմներու տ ա կ տ ի ք ը, կուժեւը Հայաստան փոխադրւի. համերաշխ խմբական կռիւներով Հայաստանը գերեզմանը ըլլալով թիւրք պաշիպօզուքներուն։ Գաղափար մը որ դժւար չէ, եթէ հայ հարուստը րոպէ մը զոհէ անդրադառնար իր վրայ սոսկ վեհանձն թրթռումով մը։

Հայաստանը իր աշխարհագրական դիրքով, ձորերով, խորխորատներով, հովիտներով, կիրճերով, լեռնային ճմուռներով, քարքարուտներով, թաքստոցներով, անհուն դիւրութիւններ կ'ընծայէ ֆէդայիներու իրենց բոլոր շարժումներուն մէջ, թէ յարձակողական եւ թէ պաշտպանողական։

Հայերը՝ այնքան աղէտներէ, փորձանքներէ, յուսախաբութիւններէ ետքը, ճիշդ է, ունեցան հիասթափութիւններ, լքումի ծանր օդ մը ճնշեց անոնց վրայ, որոնց քիչ չնպաստեցին հակայեղափոխական մաղձոտ քարոզները, վայնասունները։ Բայց անողոք իրողութեան առջեւ, որ կը սրէ միտքերը եւ սրտերը, եւ որ կոյր հեգնութիւնով մը կը շարունակի, հայ ազգը վեր կը պրկւի նորէն. արիութեան, կամքի եւ իտէալի հզօր առաքինութիւնով մը, կռւելու արու զինուորութիւնով մը։

Տարօնը իր Սերոբներով, հիանալի Մարգար վարժապետներով, Գուրգէններով, որոնք առողջ ու բարի սերմը ցանեցին եւ ինքնապաշտպանութեան խրոխտ ոգին հասունցուցին հոն, կը պարտաւորէ իր հերոսներու քաջագործութիւններով, որ ամբողջ հայ ազգը հպարտ ցնցում մը ունենայ։

Առաքելոց վանքին մէջ Անդրանիկի հրամայական „Յայտարարութիւնը", խմբագրւած անիրաւութեան եւ քմահաճ բռնապետութեան դէմ բողոքող գաղափարական զինւորի մը արժանի գիտակցութիւնով, նշան է թէ հայ ժողովուրդը գիտէ իր ցաւերը եւ այն դժոխային պայմանները, որոնց մէջ կապրի դարերէ իվեր. շատ լաւ կը ճանչնայ ան սուլթանները ու սուլթանիկները, որոնց անձնիւրին պէտք է զատ զատ զոհացում տայ։

Այդ Յայտարարութիւնը ուղղւած է սուլթան Համիդին, ամենազզւելի մարդուն, որ մօրը փորէն ինկած օրէն դէպի քրիստոնեաները արիւնային ատելութիւն մը սնուցած է, եւ որ, իր երկիրը մոխիրի վրայ նստեցնելով, ճարպիկ դիւանագէտի ձրի համբաւն ալ ստացաւ։ Հաւանօրէն — մարգարէ ըլլալու պէտք չիկայ — երբ քիւլհան պէյի սուլթանը, Եըլտըզի պաթախանէին մէջ խոզութիւններով մեծցած այդ անկիրթ մարդը, կարդաց այդ յայտարարութիւնը, չի կրցաւ իր ազնիւ սրտի աղտոտութիւնները, հայհոյանքները չթափել եւ հրամայել որ նոր ջարդի ծրագիրներ պատրաստւին. չէ՞ որ այդ մարդուն համը բերանը մնացած է ան օրերէն իվեր, երբ իր ոճրագործութեան պատրաստւած վայրերը, զինւորները կուղարկէր որ հայերը քնած, անզէն ու անգիտակ աշխատած ատեննին, յանկարծակիի բերեն ու խողխողեն, որոնց առջեւ իր բերանը կը սրբէր, յայտարարելով որ չի կրնար իր ժողովրդին մոլեռանդութիւնը սանձահարել։ Միայն թէ երջանիկ խալիֆան, նոյնիսկ ալլահի շուքին մէջ, չէր յաջողէր ամէն ինչ քօղել, միշտ տակը բաց կը մնար, եւրօպացիներուն օսմանեան զմայլելի ու պարկեշտ քաղաքակրթութեան... ճաշակը տալով։

Անդրանիկի Յայտարարութիւնը նախաքայլն է այն եղելութիւններուն, որոնք լափող անէծքի պէս պիտի կրծեն Թիւրքիոյ սիրտը — եթէ ունի դեռ սիրտ — եւ սուլթանը իր պալատի արիւնալի վոհմակներով, պիտի չկրնայ իր ոճիրներու պտուղը հանգիստ հանգիստ վայելել։

Մեր թշւառութիւնը արգասաւոր պիտի ըլլայ հերոսներով, մէկը կը մեռնի, երկուք կը ծնին։ Մարգար վարժապետը կախեցին, Գուրգէններ, Սերոբներ նահատակեցին, Անդրանիկը ու անվեհեր ֆէդայիները երեւցան հորիզոնին վրայ.

„ Ու դեռ մայրերը կան, արգասաւքեր ու հերարձակ,
„ Որ վերը, վրաններուն մէջը դաշտավայրին,
„ Իրենց յուղթի ու լայն ու լուսաւոր կողերուն տակ,
„ Մեր վաղորդայնները փառաւորելու համար
„ Մոլեգին դիւցազուններու երկունքը կապրին...

Այս անման տողերը, քաղւած „Դիւցազնօրէն" փոքրիկ գրքոյկէն — հիանալի եւ ուժեղ դիւցազներգութիւն մը — նւիրւած հայ ֆէդայիներուն, որոնք

„ Իրենց փշրող ակռաներուն տակ հրաշէկ դանակներ
կը տորրեն

եւ „ Որոնք կանցնին իղէալի գագաթներէն ազատարար
խոյանքներով"...

արդյօք պատասխանը չէ՞ մեր արիւնարբու թշնամիին անզօր ճիգերուն եւ հայ ցեղին վրիժառու եւ անընկճելի կորովին մռնչիւնը միանգամայն։

Know how sublime a thing it is
To suffer and be strong

„Ի՜նչ վսեմ բան է, տառապիլ եւ զօրաւոր մնալ"։

Ամերիկացի բանաստեղծին այս խօսքերը զուգորդելով առաջինին կը խորհրդանիշէ գուցէ մեր պայքարի հոգեբանութիւնը, որուն մէջ արդէն կը տեսնենք մեր ցեղին, մեր գոյութեան ազնւական գիծերը։

Մեր հայ գաղութներէն շատերը դժբախտաբար, ազգային դատի տեսակէտով, մեռածութիւններ են, քիչ շատ ազգային թելմաշ աւանդութիւններու փաթաթներով մումիացած. Հնդկաստան, Ճավա եւ մասամբ Եգիպտոսը։ Փարաւոններու աշխարհին մէջ հայ գաղութը քայլառքայլ կը հետեւի Պոլսին, իր սահմանադրական, առաջնորդական, դպրոցական, թաղականային, դասական եւ ամուլ հարցերով. իր ժամերը կանցնէ անուշ ծուլութեան մը մէջ, սրբազան Նեղոսի ափերուն վրայ, շրջապատւած դարաւոր մեծափառ աւերակներով, յիշատակարաններով, անսահման անապատով, ու... գերեզմաններով, որոնց առջեւ Հայաստանի աւերածութիւնը կը կորսնցնէ կարծես իր նշանակութիւնը։

Հազիւ հազ պարբերական զով քամիները կը պրկեն անոնց շոգէն մոմի պէս թուլցած ջիղերը ու հալած ուղեղները։

Անոնք որ յեղափոխական զրահով կը մտնեն հոն, պղնձէ սաղաւարտներով երբեմնի զինւորներուն պէս, շուտով կըզգան, որ իրենք նուբարներու, պէյերու աւատական երկրին մէջ են, որոնք իրենց յաւիտենական ժպիտը կը սփռեն, ինչպէս սփինքսները, հայ հասարակութեան վրայ եւ որոնց անձնիւր ժէստը կը կանոնաւորէ հայ գաղութին տրամադրութիւնը, ինչպէս Նեղոսի ոռոգման ջրանցքները։

Յեղափոխական գործիչները այդ միօրինակ եւ ըմբոստ հայ վայրին մէջ, գրեթէ հիասթափ եւ հեգոքացած կը մնան. չկան հոն, թէեւ ազատ միջավայր, մեծ ելեւէջներ, խրոխտ տատանումներ եւ բողոքի սրտագին ճիչեր, թէեւ այդ երկիրը մեծ թատր մը եղած ըլլայ մարդկային մտքի հոյակապ շարժումներուն, եւ ուր հին հեթանոս եւ նորածին քրիստոնեայ աշխարհներու միստիքականութիւնը իրարու հանդիպեցան։

Եգիպտոսը Հայաստանի համար բարոյական ու նիւթական շտեմարան մը եղած չէ, ինչպէս երբեմն եղած էր Հրէաստանի շտեմարանը եւ կարծես եթէ Մովսէս մը համարձակէր Կարմիր ծովէն անդին աւետեաց դաշտերը ցոյց տալ, անոնք չպիտի վարանէին յիշել Եգիպտոսի սոխը սխտորը։ Հոն աւելի կը հետաքրքրւին պատրիարքարանի դռնապանի մը կամ հայ աղայի սուլթանէն պատւանշանի արժանանալէն, քան թէ մեր հրատապ հարցերով։ Անգլիոյ ազատ հովանաւորութեան տակ եւ օտարոտի միջավայրի մէջ, որ կուտայ անոնց անտրտում ուրախութիւնը ու... արեւելեան զգայապաշտութիւնը, անգոյն եւ կեդրոնախոյս տարր մը կըսկսի դառնալ Նեղոսի խորթ հովտին մէջ ապրող հայութիւնը, ուր ազգային զգացումը, ընտանեկան աւանդութիւնները, հմայքը եւ անձնասիրութիւնը կը կորսնցնեն իրենց ջղայնականութիւնը. այդ գաղթավայրը, որ ամէն հաւանականութիւնը ունէր մեր զգայարութեան մարտկոցներէն մին ըլլալու, անորոշ, պաղած նայւածք մը, գուցէ արհամարանք մը ունի, ինչպէս Եգիպտոսի արձանները, այն արեւահար երկրին մէջ, որ „անհուն գերեզման" մըն է, ըստ Միշլէի, եւ որուն ճակատագիրը „մեռելներու գրքին" մէջ մեհենադրօշմւած էր։

Փարաւոններու հովիտէն դառնանք Եանքիներու նոր աշխարհը. հոն կը գտնենք թարմ, աշխոյժ եւ շահագրգռող հատւած մը հայ ազգին, որ կը ծառէ, կը վրճի, կը հայհոյէ... յանուն Հայաստանի եւ ազգային շահերու եւ որու մէջ Սամուէլ Սմայլս գտնէր թերեւս „ինքնօգնութեան" գեղեցիկ նմուշներ։

Միակ հայ գաղութն է, որ — թէեւ հին յոյներու պէս մայր հայրենիքէն սրբազան հուր չէ տարած հետը — կըզգայ իր մէջ գործելու, բողոքելու նախաձեռնութիւնը եւ հայրենիքի ցաւվիշտը թարգմանելու անկեղծ դաւանանքը ունի։ Կըզգաս որ ազատ երկրի քաղաքացիական առաքինութիւնը կըսկսի մակրդւիլ հայ արիւնին մէջ։

Պօսթընի — ուր մաքրակրօն „Ուխտաւոր հայրերը" Միացեալ Նահանգներու „Մայր Նահանգը" հիմնեցին — եւ իր դրացի փոքրիկ նահանգներուն մէջ, լեցուն են հայաստանցի զաւակները, որոնք իրենց մայր հողէն վտարւած ուժերնին օտար ծառայութեան սպաս դրած են։ Ուստըր, „Հանրապետութեան սիրտը", Փրովիտէնս, Փիլատէլֆիա, Փիթսպուրկ—դժոխային քաղաքը, Լին, Լօրէնս, Նիւ-եորք, եւ դեռ հեռուները, ետ ինկած քաղաքներու մէջ, հայ աշխատաւորները, կարծես մոգական ազդեցութիւնով մը ականջ դրած օդին ու հողին անհամբեր լուրերու կըսպասեն

իրենց գաղթական հայրենիքէն, արձագանք կուտան ամենամեծ ցաւին, կը ծափահարեն Քէդայիին յաղթական քայլերը եւ զիտակցութիւնը ունին իրենց պարտականութեան, որ չբաւեք կը տեսնուի, եթէ վախկոտ Այաքսի պէս պակեանի միւս պիտի իրենց քանցաբ ներով սպասնալ աստուածներուն ու հայրենիքի թշնամիներուն։

Պօսթըն հայ գաղթականութեան պորտը եղած է, ինչպէս եղած է Ամերիկայի նախաձեռնութեան Սա-ը (սեռն), որուն շուրջը կը դառնար մեծ հանրապետութեան քաւիտի անիւը։ Նոյն պատմական երեւոյթը կը նշմարի այնքան հայ գաղթականութեան մէջ, որ «ինչպէս» ծանապարհը նշած է նաեւ իրագործելու։

Նիւ-Եորքի մէջ գեղեցիկ երեւոյթ մը կազմած է „Հայ ինքնապաշտպանութեան յանձնախումբ“ մը, որ կոչը տուած պիտի հիմնուի իր վերնատունին մէջ ամերիկեան ազատասէր եւ հայասէր երեւելի քաղաքացիներ, եւ նպատակուն օժանդակութիւնով պիտի աշխատի Հայաստանի մէջ հայ ժողովրդին ինքնապաշտպանութեան միջոցները դիւրացնել, ի տակին զէնք իւ պաշար հայթայթելով հայ գիւղացիին եւ հայ Քէդայիին եւ որուն դէմ նկնած են նաքցիներ տալ յաւիտենական ոչնչացումները։ Մեր յեղափոխական կեանքին մէջ ցանկալի իրագործումներէն մին է, երբ ազգերը եւ յոյները իրենց դժնդակ օրերուն եւրոպական այդպիսի հաստատութիւններէ մեծապէս օգուտներ ստացան։

Նոր աշխարհը, կրօնական ազատութիւններու նէս, ունի իր բազմաթիւ հայ կուսակցութիւնները, որոնց մէջ խառնիխուռն կը գործեն ամէն գիտի մարդիկ։ կան որ ՄԷՆ-ՕՐԷԱՆ մէջ պատմելիներ թենէ յեղափոխական պետ դարձած են։ Որովհետեւ Նոր աշխարհին մէջ ամէն բան յանկարծական է։ կէս մարդերէն սուրը հոգոն ազդեցութիւնով լման մարդիկ առաջ կուգան։ Քրիստոս իշու վրայ հեծաւ, հիմա էշերն են որ Քրիստոսի վրայ կը հեծնեն, պիտի ըսէր Հայնէ կամ Ինկերսոլ։ ալբտիներ, որոնք հիանալիօրէն շուտ կուտան երեսնին յեղափոխութեան ու հակայեղափոխութեան բարեբար հոսանքներուն համեմատ, եւ դեռ ինչնիներ, որոնք „ոսկեղէն համարներէն“ զզուած, զացած էին Ամերիկան՝ անհաւատութիւն Սիրվիլ։ կը տեսնենք թէ ինչպէս իրենց բոլոր շքեղութեան ու պերճախօսութեան դափնիներով, աջ ու ձախ պատգամներ կը նետեն, ածականներ կը շաղոտեն, ոգիմաստասիրեն պաղ քրտինք ածածուումով մը, գլուխնին փորձառութեան ժայռին վրայ սրած, եւ եթէ ճիգ մ՚ընեն իրենց սրտէն զգացած յեղափոխական սարսուռ մը արտայայտել, ենթապատճառ իրենց հակառակորդը դատապարտելու հոգեկան պահանջը կը զգան կամ հայ Քէդայիին երբեմն հարամարոտ խօսքերը աչք մը նետեն իրենց... Տխրութիւնը ու ինքնաքական շրջահայեցութիւնը ցցնելու համար։

Դեպքեր աղբարներու շրջմոլիկ քարոզներուն հակառակ, Ամերիկահայերը, աւելի ու աւելի սիրտերնին կը բանան հայրենիքի աղաղակներուն առջեւ, կուգեն հաւատքով փարիլ հայրենիքի սուրբ գործին, խոնարհիլ տխուր կամ յուսատու իրականութեան առջեւ, ոգեւորիլ եւ զօտեպնդիլ հայրենիքի վառանգին մեծութեան դիմաց, երկնցնելով իրենց աշխատաւորի արի բազուկը ու վրէժխնդիր հոգին յեղափոխութեան դրօշակին։

Սիրուած ազատութեան մթնոլորտի մը մէջ, արեւմտեան վերածնող հոսանքը մեր արիւնին մէջ, ընդհանուս յոյսերով եւ ծրագրով, երբ ուրիշ գաղութներն լռութեամբ մահացու դաւաճանութիւնը կը պահեն։

Աշխարհական ու հոգեւոր դասակարգին մէջ հետզհետէ կը թուլնայ դիմադրող կոյր ուժը. կը զգաս որ Ս. Օգոստինոսի տենիլը մը ըսած է անոնց „Առ ու կարդա“։ Ամէնքը համոզուած են որ պատմութեան անսխալ օրէնքով, հայ ազգը եւս ճշմարիտ յեղափոխութեան փորձութեան բովէն պէտք է անցնի իր գերութեան ժանգերէն սրբուելու, իր էտէալի մեծութիւնը նորոգելու եւ իր գոյութիւնը ապառաժ հիմերու վրայ դնելու համար։

Ամերիկահայերը իրենց բարեշրջումի ճամբուն մէջ, յոյսի եւ եղբայրական բազուկը կերկնցնեն արի ու թշուառ Հայաստանին, որպէս զի օր մը, նամակերով ու արտասուագին, Նիւ-Եորքի ջրերուն մէջ ընկղմած հայաստանի ուրուանաւը տեսնելու կարօտը չզգան ինչպէս Լոնկ Փէլլոյի phantom ship-ը։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ՊՐՕ ԱՐՄԷՆԻԱ“

(№№ 4, 6, 7, 8)

№ 4. Կիսամսեայ՝ Ադրիանուպոլսոյ կախաւածները։

«Նրանց գործունէութիւնները — ասում է Քիյառ — մի տարբերվոր դաս են ձգձգող դիւանագէտների եւ պետական գործունեայ մարդկանց համար, եթէ նրանք ընդունակ լինէին ընդունելու այդպիսի գործունէութիւնների նշանակութիւնը։ Այլեւ Հայաստանում չէ միայն, այժմ հայ յեղափոխականները իրենց գործունէութեան վայր են դարձրել Նոր Եւրոպան, ինչպէս որ ասել էին նրանք 1896-ին։ Բայց Ստամբուլի գրաւման վերջակէտ կան այդ ինքնաբերեալների մէջ դաղափարի մարդիկ, որոնք վճռած են իրենց ամբողջ կրքով իրենց ինչ լոգուտ իրենց ժողովրդի։ կան մշակներ, որոնք պատրաստ են իրենց անձնուէր կեանքը զոհելու։ Նրանց կատարեալ համաձայնութիւնը իրենց գործակցի ընկերների հետ ցոյց է տալիս նաեւ դ նրանք պատրաստ են իրենց աշխատանքը տալ բոլոր այն մարդիկներին, որոնք կարող են մի մեծ գործ՝ մի գաղափարի դէմ...

«Այս այժմ Չալանը անկել տալ կարիքաղանկեալ թիւրքերոյ բոլոր քաղաքներուն թող քաղաքացիութեան ուրիշ պատմութիւնները շարունակեն պաշտպանել զազրելի Մարդասպանին։ փոյթ չէ, պաղատարը չեն ապանուում»։

Նոյն հասարի մէջ զետեղած էջանրագրեալ արձանագրութիւնը այն հարցնդունդ, որ հայնաէր պատգամաւոր վանի կոչ վերջին քրիստոնեայ հօրանդական պարլամենտում։ Ապա՝ „Սիոնիստական կոնգրէսը և սուլթանը“ — յոդուած նշանաւոր հրեաբդի հիմնադրակախոն Բ էրնար Լազարի։ Այդ յոդուածը գրուած է Սիոնիստական կոնգրէսի յայտնի հեռագրի և հայ ուսանողների ձեւակերպած որոշումի առթիւ։

* * *

№ 6. — Խմբագրական Ֆրանսիս դը Պրէսանսէի՝ „Ազդարարութիւնից յետոյ“։

Յօդուածագիրը խօսում է երկու տեսակի „դիւանագիտութեան“ մասին՝ պաշտօնական և յեղափոխական դիւանագիտութեան։ Առաջինը այն է՝ որ բազմում է կանաչ սեղանի շուրջը պրոտոկոլներ գրելու համար, որ այնքան թանկ է նստում և համարեա ոչինչ չի շինում։ Երկրորդը չի երեւում հրապարակի վրայ, այլ գործում է գաղտագողի և խօսում է ցած ձայնով...

«Երբ կը գրեն վերջին դարու վաւերական պատմութիւնը, այն որ չի կազմուում պաշտօնական գոկումենտներից եւ պետական ստերից, այն ժամանակ կը պարզուի, թէ ինչ դեր են խաղացել Իտալիայի «Յարութեան» եւ գերմանական միութեան կառուցման մէջ՝ Կավուրների, Վիկտոր Էմանուէլների, Բիսմարկների ու Մոլտկէների կողքին՝ այդ մեծ ու անխոս դերասանները, կորած խաչարի մէջ, թաղուած անանուն ամբոխի ծոցում — որոնք ոչ մի վճռական ժամին եղել են գործող ոչ մի, եղել են արարող պատճառը այն մեծ անցքերի, որոնց վկայաւոր (patentés) հերոսները եղել են միայն նրանց արձանագրողներն ու նրանցից շահուողները։

... Այս գիտակցով հանդերձ՝ բնաւ դիտաւորութիւն չունինք պախարակելու ամենայեղափոխական կուսակցութիւններին անգամ, որոնք իրենց գատի շահն աչքի առաջ ունենալով՝ մտնում են դաղտնի բանակցութիւնների մէջ եւ ճիգ են թափում՝ մի քայլ անել տալու պաշտօնական դիւանագիտութեան։ Երբ վերջին ամառը Հայաստանի լիազօր ներկայացուցիչները՝ վայրկեանը բարեպատեհ կարծելով՝ փորձեցին դերագոյն մի դիմում անել կառավարութիւններին՝ նրանց ուշադրութիւնը 61-րդ յօդուածի վրայ դրաւիրելու համար — նրանք հնազանդուում էին զգայմունքներից ամենաօրինաւորին եւ ամենայարգելիին։

Նրանք չեն կարող անտարբեր մնալ, երբ հնարա-

ուրբաթին ինչպես պետութիւնների հաւասարաչափ գործողութեան ընդ կարելւոյն հեռացնել անաւոր մի ճգնաժամի ցնցումները իրենց ժողովրդից։ Այդ մարդիկ չեն խաղում ցեղասպանութեան հետ, նրանց միտն ու սրտին՝ ինչպես հայրերի ու մայրերի, կանանց ու աղջիկների միտն ու սիրտն է, որ հոգում է այդ օրհասական կռիւի ծախքերի։

...Հայերը հանդիսաւոր ազգարարութիւն արին Եւրոպային, յորդորեցին նրան կատարել իր պարտականութիւնը... Այդ օրից մի նոր շրջան է բացւում... Ասպետ խնդրեմ պարոնայ, ինչ Դելկասէն ճիշդ վերադարձը էր յայտնում պարլամենտի առաջ, ինչ որ պատ էր Անդրանիկը Ա. Սադաքեանց վանքում, առաջնորդ Խաչով Բերիզեանի ներկայութեամբ...։ (Պրէսանոէ ակնարկում է մինիստրի այն նշանաւոր խօսքերի վրայ, որոնք հաստատում էին հայկական յուզումների «ճակատագրական» լինելը)։ Մի բան, որ Եւրոպան այժմ պիտի լսէ ու հասկանայ, այդ այն է, որ հայերը արդէն իրենց երեք ազգարարութիւնները եւ որ նրանք իրաւունք են համարում անցնել գործողութիւնների։ Դիւանագիտութիւնը ուզում է կարծէք ապացուցանել նրանց, որ նա այն ժամանակ միայն հաշիւ կառնէ նրանց (հայերի) ամենահամեստ պահանջները, երբ նրանք կը խոովենք նրա հանգստութիւնը այնպիսի ձեռնարկներով, ինչպիսին էր Բանկ Օտտոմանի գրաւումը 1896-ի օգոստոսին...

Թող պահպանողական բուրժուազիայի փարիսեցիները նախօրոք դատապարտեն այդ տեսակ միջոցները. իսկ ես, որ սովորել եմ պատմութիւնից, որ չկայ մի կուսակցութիւն, որը իր ժամանակին, յաղթանակելու համար դիմած չլինի կոպիտ ուժին,—ես բանի տեղ չեմ դնի այդ կեղծաւոր բողոքները...

Պէտք է ընդունենք անկեղծօրէն, որ հայերը, ինչպէս եւ Համիդի ճանկերում գալարող բոլոր միւս ազգութիւնները մշտնջենական պատերազմական վիճակում են գտնւում այդ վեհապետի հետ եւ, կարծում եմ, ոչ ոք չի պնդի, թէ պատերազմի իրաւունքը, որը թոյլ է տալիս 235,000 զինուոր ունեցող Անգլիային՝ 12,000 բոյէրների դէմ մղած իր անաջող կռիւի մէջ բռնաբարել միջազգային իրաւունքը, գերիներին կոտորելով եւ չկուղներին կղզիացնելով—ոչ ոք չի պնդի, որ այդ պատերազմի իրաւունքը արգելում է հայերին՝ ամենաազդու միջոցներ ձեռք առնել Եըլդըզ Քիոսկի բռնակալի դէմ։

Եւրոպան, մերժելով գործել, խօսքը տուել է յեղափոխութեան. ի՞նչ կը լինի սրա առաջին խօսքը»։

„Կիսամսեակում“ Պիէռ Քիյառ խօսում է այն ուշագրաւ միջնադէպի մասին, որը ծագեց Ֆրանսիական պարլամենտում՝ պատգամաւոր Մարսէլ Սամբայի Դելկասէին ուղղած հարցումի առիթով։ Սամբա հաստատում էր, որ Ֆրանսիան շտապով յետ կանչեց իր նաւերը Միտիլենից՝ Ռուսաստանի ճնշմանտակ, և որ ռուսաց դիպլոմատիան այդ ճնշումով նպատակ ունէր արգելել Ֆրանսիային՝ հայկական խնդիրը յարուցանելու։

„Պրօ Արմէնիայի“ այդ համարը պարունակում է նաև Իլզէ Ֆրապանի կոչը, „Մայիսեան մէմօրանդումի“ մի մասը և կարևոր թղթակցութիւններ Տաճկաստանից։

* * *

№ 7. — „Հայ պատուիրակների յայտարարութիւնը օսմանեան ազատականների համաժողովում“։

„Կիսամսեակը“ երկարօրէն այդ համաժողովի վրայ ծանրանալուց յետոյ՝ կուի յորդոր է ուղղում մասնաւորապէս հայերին և առաջին անգամը թելադրում է ֆրանսիացիներին՝ նպաստել հայկական ինքնապաշտպանութեանը, կազմակերպելով այդ անունով մի կոմիտէ, որպիսին արդէն կազմակերպած է Ամերիկայում։

Հետևում է Պրէսանսէի ծրնէվում արված բանախօսութեան արձանագրութիւնը և ապա թղթակցութիւններ Ճաճկաստանից ու Մակեդոնիայից։

* * *

№ 8. — „Սերբիայի համար“. Վիկտոր Հիւգոյի մի թրատուչ ամբաստանագիրն է դա, ուղղած եւրոպական պետութիւններին 1876-ին Սերբիայում կատարուած թիւրքական գազանութիւնների առիթով։

Վերջերս Հանոտոն — առանձին է „Պրօ Արմէնիայի“ խմբագրութիւնը — համարձակուել է Պանթէոնում ներքոյ արտասանել Վիկտոր Հիւգոյին։ Մենք կարծում ենք աւելի արժանաւոր կլրսով փոխարինել բանախօսութեան հայրենասիրական, վերարտադրելով այն էջերը, որ նա գրել է 1876-ին, սերբիական սարսափների միջոցին։ Բաւական է „Սերբիա“ բառը փոխարինել „Հայաստան“-ով և այս էջերը կերևան ձեզ, իբր երէկ միայն գրուած։ Եւ պետական մարդիկ, որոնք գժկամակութեամբ ու կէս-բերան փառաբանում են Հիւգոյին, գնա էլի կը մեղադրէին նրան չափազանցութեան մէջ ու կը վիճէին զոհերի քանակութեան մասին»։

„Կիսամսեակ“. Թիւրք ազատականներին. դա մի ազդու կոչ է, որ Քիյառն ուղղում է երիտասարդ թիւրքերին, հրաւիրելով նրանց՝ ձեռք վերցնել սին ֆրազներից, հետևել հայերի օրինակին և ջարդի ու տէձօրի ռէժիմին ընդդիմադրել յեղափոխական կռիւը։

Հետևում են թղթակցութիւններ, մահգոյժ դոկտոր Սիքիութիի (քիւրդ) և Մայիսեան մէմօրանդումի շարունակութիւնը։

* * *

Ձենք կարող դէթ քաղաքաձօրէն չբերել այստեղ Ֆրանսիական պարլամենտի անդամ Ռուանէի լուրջ, ընդարձակ, բովանդակալից մի յօդուածը, որ հրատարակեց *La Petite République*։

... „Այսօր տակաւին չէ գոցուած ազգային միութիւնների գոյացման շրջանը։ Թէպէտև Աւստրօ-Ունգարիայում ու Բալկաններում ժողովուրդների ձգտումները դէպի ազգային անկախութիւն՝ ջունին վաղեմի օրերի խռովայոյզ, յեղափոխական բնաւորութիւնը, այնուամենայնիւ ազգայնական պահանջները յարատևում են...

„Օսմանեան կայսրութիւնը թատր է ներկայանում միևնոյն ազգայնական խմորումների, որոնք այնքան երկար ժամանակ ալեկոծել են Բալկանեան թերակղզին։ Այդտեղ ազգային պրոբլէմը դեռ բարդանում է կրօնական խնդրի շնորհիւ... Փոքր Ասիայի ժողովուրդները պահպանել են բնազդօրէն մի հողի վրայ, որը երբեմն առաջին օճախն էր արևմտեան քաղաքակրթութեան, իրենց անցեալ մեծութեան յիշողութիւնը...

„Զարմանալի չէ, ուրեմն, որ վերջին հարիւր տարայ ընթացքում ազգութիւնների զարթնումը շեշտւում է Արևելքում ևս, ինչպէս Արևմուտքում։ Տեսանք ազգութիւններ, որոնց արդէն մարած էին կարծում, և որոնք յարութիւն առան առաջին գրոհից...

„Արևելեան բոլոր ազգերի մէջ, որոնք արտասովոր կենսունակութեան ապացոյց են տուել, ամենահամակրելին հայ ժողովուրդն է։ Ամենահամակրելին՝ թէ այն երկարատև մարտիրոսութեան պատճառով, որ նա կրել է առանց խորտակուելու և թէ այն պատասխանատուութիւնների պատճառով, որ ունի Եւրոպան այն ողբերգական

անցքերի մէջ, որոնց արիւնոտ զոհն է հանդիսանում այդ ժողովուրդը...

„Եւրոպայի հետ ունեցած շփումի մէջ է, Եւրոպայի նախաձեռնութեամբ է, որ հայ ժողովուրդը հաստատեց իր կենսունակութիւնը, որ նա ճանաչեց յոյսերն ու տանջանքները: Ռուսաստանը հայոց այդ ազգային զարթնումի առաջին հեղինակն էր: Նա էր, որ զարկ տուեց առաջին էներգիաներին, նա էր, որ Կովկասում այդ ազգի ընտիր զաւակներին իրեն օգնութեան կանչեց՝ Թիւրքիայի դէմ մղած իր պատերազմի մէջ: Հայաստանը տուեց նրան զօրապետներ, վարչական անձեր, պետական մարդիկ: Ռուսիան ամէն ինչ վերցրեց. Նա իւրացրեց լաւագոյն հայերի անձնազոհութիւնը, հերոսութիւնը, խելքը: Դրանից յետոյ նա իր թաթը դնելով երկրի մի մասի վրայ, որը նրան ճանաչում էր իբրև ազատարար, նա ենթարկեց Հայաստանի ռուսական մասը իր փճացած բիւրօկրատիայի լծին, թերևս աւելի ճնշող և աւելի բռնակալ, քան օսմանեան լուծը...

„Հայերի ջնջման սուլթանական ծրագիրը, ինչպէս Ժօռէսն էր ասում 1897-ին (իր նշանաւոր հարցապնդումի մէջ), ոչ մի զղջանք չէ յարուցանում Պետերբուրգի մէջ... Եւ Եւրոպան, մոռանալով իր ստանձնած պարտաւորութիւնները, իր խոստացած հովանաւորութիւնը, մի վայրկեան ցասումից յետոյ, ազատ է թողնում սուլթանի ձեռքը: Այնպէս որ, պատմութեան հեգնութեամբ, քաղաքակրթութեան լիակատար փթթման շրջանումն է, որ մի ամբողջ ազգութիւն պիտի ջնջւի սրով ու երկաթով Փոքր Ասիայի քարտէզից... Համաշխարհային էգօյիզմի և քաղաքակրթութեան անկման ամենավշտաւոր տեսարաններից մէկն է սա, ամենաամօթալին որի նմանը չենք տեսած երկար ժամանակից իվեր":

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

„Զանգ" կոմիտէից 75 ֆրանք, ՈՍԿԱՆԱՊԱՏԻՑ (Ըւ.-ի միջոցով) (390 ռուբլի) 1040 ֆրանք, ԱԹԷՆՔԻՑ՝ Արթ. Գուլ.-ից 10 ֆր., Կ. Պօղոսեան (Չիկագօ) 10. 30 ֆր., ՍԷՆԹՐԼ ՓՕԼՍԱԻՑ (Ամերիկա)՝ Գ. Սուրէնեան, Խ., Ա. Գ., Փերուշան, Խոհարար, Ա., Հայկ մէկ-մէկ-ական դոլար, Գեղամ, Նուպար, Ց. Ն. 50-ական սէնթ, Մարտիկ, Ա. Գ. 25-ական սէնթ. գումար (9 դոլար) 44 ֆր. 95 սանթիմ: Հայկ Շահնամեանից (Գ. քաղաք) 74 ռուբլի: ԲԵՐԼԻՆ՝ Ա. Տ. Մ.-ից 22 ֆրանք 15 սանթիմ, ՋԻՔՈՒՏԻ՝ Կ. Ար. 50 ֆր., ԴԱՎՕՍ՝ Էլիօ 4, օր. Ղ. 7. 50, ՈՍԿԱՆԱՊԱՏ Ըւ.-ի միջոցով 1867. 75, տիկ. Աք. 10, Դ. Ցար. 5. Մ. Կար. 10: Ընդհանուր գումար 3158 ֆր. եւ 74 ռուբլի:

ՍՈՒԼԻՆԱՅԻ հետեւեալ քարեսներէ կամաւոր նուէրներ.
Դր. Մարտիր. 11 ֆրանք, Բր. Խաչատ. 10, Վր. Մարտիր. 10, Եղ. Վարդ., Գր. Յակ., Կար. Ման., Գր. Ասատ., Կար. Օհան., Սր. Օհան, Զատօ, Մարտ. Սաֆր., Սող. Օհան., Սհ. Յարթ., Ղազ. Վրդ., Պղ. Յարթ., Օհ., Թում., Վրդ. Աչամ., Մուր. Մուրատ., Խաչ. Յովսէփ., Սհ. Սիմ., Նիկ. Վրդ., Դաւ. Յակ., Ստ. Խաչ. 5-ական, Մխ. Աիմ. 2, Պղ. Մուրատ 3. Ցար. Օհան. 2, Յուսէփ Սի. 2: Գումար 140 ֆրանք:

Մ. Յակ. 11 ֆրանք, Սր. Փիրօ 12, Յով. Գալ. 6, Թ. Յովհան. 6, Խէպ. Բարսեղ. 6, Յակ. Մխիթար. 3, Վրդ. Յովհան. 5. 55, Դան. Խաչիկ. 6, Վրդ. Շահին. 1, Յակ. Մուրատ. 6, Ղզ. Պօղոս. 5, Ա. Սահակ. 2, Գր. Մանկ. 6, Մուր. Շահեն 5, Գէ. Աւետիս. 3, Մկ. Իւլօ. 6, Պետ. Ժաղօ. 3, Ար. Մարտիր. 5. 55, Մուր. Կարապետ. 3, Օհ. Մանուկ. 2, Էլօ 5, Սիմ. Աւետիս. 6: Գումար 114 ֆր. 10 սանթիմ:

Յակ. Շահին. 4, Գր. Կարապետ., Գէ. Վարդան., Ղզ. Մուրատ., Պղ. Խոստեղ., Կար. Խոստ., Մուր. Մանուկ., Յուսէփ Խոստ. 5-ական, Յովհ. Կուրեան. 4, Սող. Ղազար. 1, Պղ. Մելիք. 1, Սհ. Խէպօ., Յակ. Մանուկ., Սիսօ Յակոբ., Տ. Խ. Ք., Ն. Աւետիս., Դաւ. Յակոբ., Նիկ. Մուրատ., Սհ. Այվազ., Մուր Ղազար. 2-ական, Ա. Տէմիրճեան 3, Աւ. Ղազար. 3, Մխ. Յարթին. 3: Գումար 72 ֆրանք: Ընդհանուր գումար 326 ֆր. 10 սանթիմ:

ԱՄԵՐԻԿԱ. – ՎԷՍԹ ՓՈՒԼՄԸՆԷՆ՝ յօգուտ Սասնոյ գործին (նոյն նպատակի համար հանգանակուած 57 դոլար գումարը տպուած է № 1 „Դրօշակ" 1902)՝ Վաղօ 2 դոլ., չոմ Հարվէէն 2, ՉԻՔԱԿՕՑԷՆ՝ Ա. Հայրապետեան, Կ. Ստեփանեան, Հ. Սօղիկեան 2-ական դոլար, Կ. Յակոբեան 1. 50, Պ. Յակոբեան, Ց. Մարգարեան, Ս. Պօղոսեան, Տ. Շահինեան, Կ. Խաչիկեան, Մ. Ջիհցերիացի, Պասմաճեան, Խ. Խամպուրեան, Գ. Թաշճեան, Կ. Մակարեան, Ց. Նաճարեան, Տ. Մաթէոսեան, Ս. Կիղեարեան, Մ. Պօղոսեան, Պօղիկեան Պօղոս, Խաչատուր Սարգիսեան մէկմէկ-ական դոլար, Ց. Պօղիկեան, Տ. Թորոսեան, Կ. Յակոբեան, Տ. Մերկոյեան, Օ. Հայրենասէր, Օ. Սըրայեան, Ց. Պօյաճեան, Ոմն 50-ական սէնթ, Կ. Մանուկեան 25 ս., Ոմն 25 ս., Գիուետ 5 սէնթ: Գումար 32 դոլար 5 սէնթ:

Լինի կոմիտէէն՝ Ս. Ա., Ս. Կ., Ց. Բ. 2-ական դոլար, Ց. Մ. 1, Կ. Գ. 1. 50, Ս. Ռ. 1. 25, Կ. Խ. 1, Գ. Խ. 1, Մ. Մ. 1, Պ. Ա., Ց. Խ., Ց. Ա., Ե. Ն., Պ. Մ., Կ. Կ., Վ. Մ., Ս. Մ. 50-ական սէնթ, Խ. Ա. 0. 25, Մ. Խ. 0. 40, Պ. Պ. 0. 75, Ս. Թ. 0. 75, Հ. Կ. 0. 55, Դ. Ք. 0. 25: Գումար 20 դոլար:

Լ. Պ. Կեդր. Կոմիտէն՝

Դաղթավայրի խումբ մը համակրողներէ 68 ռուբլի:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Կեդր. Կոմիտէն ստացած է՝

Հանգանակութեան մը արդիւնքը հետեւեալ կոմիտէներէն Ուսթր 5 դոլար, Ոթըրթաուն 10, Նեշվէ 9, Լօրէնս 26, Քանքըրտ 10, Լին 22, Ուայթէնովիլ 10, Ս. Փօլ 45, Փրովիտէնս 13. 50, Պրիճվօթըր 5, Նիւ-Եօրք 15, տիկին մը 5: Գումար 165 դոլար 50 սէնթ:

ՆԱՒԱՅԱՆԳՍՅԻ Կեդր. Կոմիտէն՝

ԴԱՂԹԱՎԱՅՐԻ Գետեզր գիւղից՝ Համբարձում 6 ռուբլի, Զատիկ 6, Ցիմար 25, Քելեկի փող՝ երկու եղբայրներ 20, Կայծակ 1, Ողորմած 5, Սուրէն 5, Մահակ 5: Գումար 78 ռուբլի:

ՎԻՑԱՊԻ Կեդր. Կոմիտէն՝

Խաչի մը վաճառումէն 345 ղահեկան, Նուէր մը 106 ղահ.: Գումար 451 ղահեկան:

ՎՐԻՊԱԿ. – „Դրօշակ" թիւ 2 ՍՈՒԼԻՆԱՅԻ „Նոր-դար" խմբի ցուցակի մէջ մոռացուած է՝ „Ասպետ" 4 ֆր., ուստի ընդհանուր գումարը պէտք է լինի 157 ֆր. 30 սանթիմ:

ՈՍԿԵՅԱՆՔԻ Կոմիտէն՝

„Գիսաւոր" խմբ. 10. 50 ղահեկան, „Աղաճի" խմբ. 21, Թովմաս Համբարձումեան 6, „Ասլանեան" խմբ. 20: Գումար 57. 50 ղահեկան:

ԲԱԼԿԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ՊՈՒՐԿԱՉԻ Մամաճիւղ 200 լէվ, ԳԱՐԱԲՈՒՆԱՐԻ „Սերոբ-Աղբիւր" խմբ. 47, „Պետօ" խմբ. 80: Գումար 327 լէվ:

ՈՍԿԱՆԱՊԱՏԻ Կոմիտէն՝

„Խայթ" եւ „Երկունք" խմբերի երեկոյթից 65 ռուբլի, Աւետիսից № 15 21, № 3 1. 10, № 14 20. 60, № 13 19, № 11 32. 50, № 7 6, Վազր 22, № 147 56, № 148 61. 40, № 149 58. 50, № 150 40, № 152 90, № 156 1, № 158 290. 60, № 75 43, № 15 22. 50, ուսանողական 320, Գ. եւ Խ.-ի 42. 35, Ծ. 50, № 151 56, „Պետօ" 61. 90, „Հրազդան" խմբի անդամս. Դեկ. 13, „Սերոբ" աշակերտ. խմբ. 52, „10"-ի թատրոնից 518, Պիատիգորսկու թատրոնից 200, „Վազգէն" խմբ. անդամ. հոկ.-նոյ.-դեկտ. 45, „Սերոբ-Աղբիւր" երեկոյթից 383. 30, հին ապառիկ օր. Ա. 20, հասարակ վիճակախաղ. թերթ. օր. Ա. 35. 50, „Վազր" խմբի անդամ. մնացորդ 1, „Արմատ" խմբի երեկոյթից 71. 93, „Արմատ" խմբի անդամավճար 28. 7, „Խայթ" խմբի անդամավճար 35, „Պետօ" խմբի անդամավճար 44, „Բիսմարկ" խմբի անդամավճար (յունուար) 17. 50, գիմնազիստներից երեսուն տոկոս 282, „Զանգ" խմբի անդամավճար 25: Գումար 3151 ռ. 75 կոպ.:

ԲՈՒՔՐԷՇԻ „Ամպ" խումբը հաւաքած է 50 ֆրանք:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du „Droschak", Genève (Suisse)